

ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Միջազգային իրավունքի և ներպետական, ազգային օրենսդրության փոխհարաբերության խնդիրը իրավական բարեփոխումների գործընթացում անխուսափելիորեն ձեռք է բերում առանցքային նշանակություն: Միջազգային իրավունքի համընդհանուր նորմերն ու սկզբունքները ակամա իրենց ներազդեցությունն ունեն նաև այն երկրների ազգային օրենսդրության վրա, որոնք վարում են համեմատաբար մեկուսի քաղաքականություն: Առավել ևս այդ ներազդեցությունը զգալի է եվրոպական գործադրություն ունենած երկրների պարագայում:

Եթե խոսքը գնում է միջազգային իրավունքի չափանիշների և ներպետական, ազգային օրենսդրության փոխհարաբերության մասին, գրեթե առանց վերապահումների գերիշխում է հիմնախնդրի ուսումնասիրության սոսկ միակողմանի մոտեցում, ըստ որի՝ Եվրոպական խորհուրդ մտնելու ձգուում ունեցող երկրները նախապես համապատասխանեցնում են իրենց իրավական համակարգը և պրակտիկան ներկայացվող պահանջներին: Չուտ իրավական ընթացակարգերի տեսանկյունից դա խսկապես այդպես է, սակայն այդ փոխհարաբերությունների ողջ համակարգն ունի շատ ավելի ընդգրություն ու բազմաբնույթ դրսնորումներ:

Իրավահամեմատական վերլուծությունը բերում է այն համոզման, որ ոչ միայն նախկին խորհրդային ու սոցիալիստական երկրներն են պատրաստվել Եվրախնտեգրման գործընթացին, այլև միջազգային կառույցներն են (այդ թվում՝ Եվրոպական խորհուրդը) պատրաստվել այդ երկրներին ընդունելու ոչ պակաս բարդ

գործընթացին: Եթե փորձենք վերլուծել, օրինակ, մարդու իրավունքների և ազատությունների հիմնադրույթների վերաբերյալ մեկնաբանությունների, ինստիտուցիոնալ առավել արմատական բարեփոխումների գուտ ժամանակագրական զարգացումները, ապա դժվար չի լինի նկատել, որ դրանց զգալի բաժինը համընկնում է 1990-ական թվականների կեսերին:

Եվրոպական խորհրդի անդամ երկրներում համարժեքուն գիտակցում էին, որ նորանկախ և ժողովրդավարական ուղին ընտրած պետությունների մուտքը դեպի Եվրախնտեգրում անխուսափելի էր, մյուս կողմից ևս գիտակցում էին, որ հիշյալ երկրների համար գործող չափանիշները հազիվ թե բավարար լինեին. անհրաժեշտ էր սեղմ ժամկետում ձևավորել և կյանքի կոչել առավել «խիստ» ու կամայականություններ չհանդուժող պահանջներ: Վերջին հաշվով այն հիմնադրույթները, որոնք լիովին բավարար էին ժողովրդավարության ավանդույթներ ունեցող պետությունների համար, հազիվ թե նույն արժեքն ունենային այն երկրների պարագայում, որոնցում դեռևս գերիշխող էր խորհրդային մտածելակերպը, համայնավարական ավանդույթները և այլն:

Ընդ որում, հիշյալ պատմական ժամանակահատվածում շեշտադրումը հիմնականում արվում էր վերահսկողական լծակների կատարելագործման վրա, ինչը ևս բացարելի է, եթե նկատի ունենանք, որ նոր անդամ երկրներում համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքների կիրառման երաշխիքներից մեկը հենց բավարար վերահսկողություն ապահովելն

Էր: Դեռևս 1992թ. Կոնվենցիայի վերահսկողական ընթացակարգերի և լծակների արմատական բարելավման անհրաժեշտությունն ընդգրծեց Եվրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, իսկ արդեն 1993թ. այդ հարցի կապակցությամբ որոշումներ ընդունեցին Եվրոմիության անդամ բոլոր պետությունների կառավարությունները: Պատահական չե, որ 1994թ. Կոնվենցիայի 11-րդ արձանագրությամբ ձևավորվեց մեկ միասնական Եվրոպական դատարան, որը փոխարինեց նախկին եռօդակ համակարգին:

Վերը նշված բնույթի բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև բողոքների քանակի կտրուկ աճով: Ընդ որում, դիմումների քանակի աճն իր հերթին թելադրված էր դիմումների ընդունելության ընթացակարգերի հստակեցմամբ ու պարզեցմամբ, ինչպես նաև երաշխավորված իրավունքների ու հիմնարար ազատությունների շրջանակի ընդլայնմամբ¹:

Կարծում ենք, որ Կոնվենցիայի պարագայում վերահսկողական գործառույթների վրա հատուկ ուշադրություն դարձնելը թելադրված էր նաև բուն այդ միջազգային փաստաթղթի առանձնահատկությամբ: Խնդիրն այն է, որ Եվրոպական խորհրդի անդամ երկրները պարտավորություններ են ստանձնում ոչ թե միմյանց հանդեպ, ինչը բնորոշ է այլ բազմակողմ համաձայնագրերին, այլ պարտավորվում են իրենց գործառույթներն իրականացնելիս պահպանել բոլոր անդամ պետությունների համար մշակված և հաստատված միասնական իրավական չափանիշները: Ընդ որում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ իրավական չափանիշները հիմնականում առնչվում են պետության ներքին քաղաքականությանը և խիստ հազվադեպ են շոշափում միջազգային հարաբերությունները:

Կոնվենցիան և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ հիմնարար փաստաթղթերը գործնականում հաշվի առնելու և դրանցով դեկավարվելու բավականին հաջողված պրակտիկա է ձևավորվել, սակայն հարկ է

նկատել, որ այդ խնդրի էլ ավելի բարենպաստ լուծման համար դեռևս արդյունավետ իրավական հիմքեր չեն ձևավորվել: Այս ասպեկտով շոշափելի դերակատարում ունեն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ կայացված և ուժի մեջ մտած վճիռների առնչությամբ կատարված աշխատանքները: Շիշտ է դրանք դեռ 7-ն են, սակայն առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների բազմաբնույթ ոլորտներին: Հավելենք միայն, որ դրանցից միայն 4-ը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումներին, ինչը, կարծում ենք, հիմնարար ազատությունների պաշտպանության նախին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ներազդեցության հիմնահարցերին անդրադանալը, նպատակահարմար ենք համարում վերլուծել ներպետական օրենսդրության և ազգային օրենսդրության փոխհարաբերության իրավական հիմքերը և դատողություններ անել այն հարցի շուրջ, թե որքանով են դրանք նպաստում նշված ներազդեցության լիարժեքությանը: Համոզված ենք, որ այս հարցի պատասխանը կնպաստի նաև համարժեք պատկերացում կազմելու այն հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք ներկայումս ձևավորվել են ազգային օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու կտրվածքով:

ՀՀ Սահմանադրությունը՝ ինչպես ներկա, այնպես էլ նախկին խմբագրությամբ, որդեգրել է մոտեցում, ըստ որի վավերացված միջազգային պայմանագրերը գերակայում են օրենքներին. «Սիջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: Այժմ տես-

նենք, թե այս, թերևս, հանրահայտ դրույթները ինչ իրավական ընթացակարգերով են երաշ-խավորված: Ըստ որում, սա չափազանց կարևոր հարց է, քանզի միայն հատակ ընթացակարգերի շնորհիվ է իրական դառնում ցանկացած սահ-մանադրական հիմնադրույթ:

Վերը նշված սահմանադրական դրույ-թից բխում է, որ իրավաստեղծ գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պետք է միտված լիներ ամրագրելու նվազագույնը հետևյալ նոր-մերը՝

ա) օրենքները պետք է համապատաս-խանեն ինչպես Սահմանադրությանը, այնպես էլ՝ վավերացված միջազգային պայմանագրե-րին,

բ) փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի վավերացված միջազգային պայմանագրերին օրենքի և այլ իրավական ակ-տերի նախագծերի համապատասխանության վերաբերյալ առանձին գնահատական,

գ) վարչական արդարադատություն իրականացնելիս վարչական ակտի իրավաչա-փությունը որոշելու համար հիմք պետք է ըն-դունվեն ինչպես Սահմանադրությունը, այնպես էլ՝ վավերացված միջազգային պայմանագրե-րը,

դ) սահմանադրական դատարանը սահ-մանադրական արդարադատություն իրակա-նացնելիս չպետք է կաշկանդված լինի որևէ ազ-գային օրենքով:

Հիշյալ պահանջները, կարծում ենք, սպառիչ չեն, սակայն դրանք իրենց ամբողջու-թյան մեջ կարող են նպաստել հիմնախնդրի լուծմանը: Հավելենք նաև, որ թվարկված հար-ցադրումներից յուրաքանչյուրը բովանդակային առումով խիստ տարրունակ է, ուստի մենք դրանց կանդրադառնանք բացառապես մեր կողմից առաջադրված թեմային առնչվող աս-պեկտներով:

Նախ, անդրադառնանք այն հարցին, թե ինչ իրավական կարգավորում է տրված օրենք-ների և միջազգային պայմանագրերի փոխա-րաբերության խնդրին: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

թի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասն Հա-յաստանի Հանրապետության սահմանադրա-կան դատարանի որոշումներին»: Տվյալ դեպ-քում, ըստ Էուրյան, անտեսված է միջազգային պայմանագրերին համապատասխանելու հար-ցը: Ճիշտ է, նույն օրենքի մեկ այլ՝ 21-րդ հոդվա-ծում ամրագրված է, որ Հայաստանի Հանրա-պետության օրենքները և այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդիանուր նորմերին և սկզբունքներին: Ընդ որում, ըստ հիշյալ հոդվածի. «Համընդիանուր ճանաչում գտած են համարվում միջազգային իրավունքի այն նորմերն ու սկզբունքները, որոնք իրավաբանորեն հավասար ուժ ունեն բո-լոր պետությունների, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության համար»:

Արտաքուստ թվում է՝ նշված բնորոշումը որոշ առումով համարժեք է վավերացված մի-ջազգային պայմանագիր հասկացությանը, սա-կայն համալիր վերլուծությունը բերում է այլ հա-մոզման: Նախ, Հայաստանի Հանրապետու-թյան մասնակցությամբ կնքված ու վավերաց-ված ցանկացած պայմանագիր չէ, որ բովան-դակում է համընդիանուր նորմեր և սկզբունք-ներ: Բացի այդ, միշտ չէ, որ հնարավոր է հատակ կանխորշել, թե որ նորմերն են համարվում բո-լոր պետությունների համար պարտադիր ու հանրաճանաչ:

Հաջորդ հարցադրումը նշված խնդրի տրամաբանական շարունակությունն է. Եթե օրենսդրությամբ, այնուամենայնիվ, պարտա-դիր է համարվում միջազգային իրավական չա-փանիների պահպանումը, ապա հարկ է, որ պեսզի այն ուղեկցվի համապատասխան իրա-վական երաշխիքով: Օրինակ՝ օրենքների նա-խագծերի իրավական փորձաքննության կարևորագույն տարրերից պետք է համարվի օրենքների համապատասխանությունը վավե-րացված միջազգային պայմանագրերին: Մինչ-դեռ, «Իրավական ակտերի մասին» Հայաստա-նի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտերը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ ակտերի մշակման ժամանակ սույն օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում ապահովելու նպատակով պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում»: Այսպիսով, կոնկրետ փորձաքննության դեպքում անգամ բաց է թողնված սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանության հարցը:

Գործնականում, իհարկե, փորձաքննության փուլում նկատի են ունեցվում ինչպես վավերացված միջազգային պայմանագրերը, իսկ մարդու իրավունքների հետ կապված իրավական ակտերով՝ նաև Կոնվենցիան, այնպես էլ՝ սահմանադրական դատարանի որոշումները, սակայն դա, ինչպես ասկում է, թողնված է բարի կամքին:

Հաջորդ խնդիրը վերաբերում է վարչական դատավարության շրջանակներում վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վավերացված միջազգային պայմանագրի հիմք ընդունելու հարցադրմանը: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:

Անհրաժեշտ է նկատել, որ միջազգային պայմանագրերն ընդհանրապես անտեսված չեն հիշյալ օրենսգրքով, մասնավորապես, սույն

օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «135-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում ամրագրված իր իրավունքները»: Կարծում ենք՝ սա շատ կարևոր դրույթ է, սակայն այս դեպքում ևս միջազգային պայմանագրերի շրջանակը անհարկի նեղացված է, քանի որ ներկայացված ձևակերպումը՝ «մարդու և քաղաքացու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի նորմեր», թերևս, չի ներառում բոլոր վավերացված միջազգային պայմանագրերը և կարող է անհարկի տարրնթերցումների տեղիք տալ:

Սակայն, եթե վարչական դատավարության օրենսգրքի պարագայում մասամբ լուծվել է հիշյալ խնդիրը, ապա դատավարության մյուս օրենսգրքերում այդ հարցն ընդհանրապես անտեսվել է: Միջազգային պայմանագրի հիշյալ օրենսգրքերով պարզապես դիտվում է որպես իրավունքի աղբյուր:

Վերջին հարցադրումը վերաբերում է այն իրավական ակտերի շրջանակին, որոնք պարտադիր են սահմանադրական դատարանի համար: Ըստ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները չպետք է հակասն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին»: Այս դրույթը, կարծում ենք, լուրջ աղերսներ ունի սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ:

Նախ, անհասկանալի է, թե ինչո՞ւ է տրվյալ դեպքում նախապատվությունը տրվել մի-

այն մի օրենքի, ինչ չափանիշներով է այդ օրենքը գերակայում մյուս օրենքներին: Բացի այդ, խոսքը դատական այն ատյանի մասին է, որն իրավասու է որոշելու յուրաքանչյուր օրենքի, այդ բայում և՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանադրականությունը, հետևաբար, ոչ մի օրենք չի կարող մեկ այլ օրենսդրական ակտով՝ տվյալ դեպքում՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, նախապես ճանաչվել գերակայող և պարտադիր իրավական իմբ սահմանադրական դատարանի որոշման համար: Բնականաբար, սահմանադրական դատարանը ևս պարտավոր է դեկավարվել օրենքներով և իր որոշումները համապատասխանեցնել օրենքներին, սակայն դա բնավ չի նշանակում, որ դրանցից որևէ մեկին կարելի է նախապատվություն տալ:

Այն, որ նախապես չի կարող որևէ օրենք ճանաչվել Սահմանադրությանը լիարժեք համապատասխանող և այդ հիմքով էլ չի կարող վիճարկվել, կարծես անվիճելի է²: Ըստ որում, պրակտիկ վերլուծությունները ևս այդ մասին են վկայում: Մասնավորապես, դրա վառ ապացույցն է սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի որոշումը, որով կարճվել է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթներ վիճարկելու վերաբերյալ քաղաքացի Ռ. Թորոսյանի դիմումի առնչությամբ քննված վարույթը:

Տվյալ դեպքում, թերեւս, անտեսվել է այն, որ սահմանադրական դատարանը դեկավարվում է ոչ միայն Սահմանադրությամբ, այլև վավերացված միջազգային պայմանագրերով ու ներպետական օրենքներով:

Առկա է նաև մեկ այլ հարցադրում. ի՞նչ կարգով կարելի է վիճարկել այն օրենքը կամ իրավական այլ ակտը, որը հակասում է վավերացված միջազգային պայմանագրերին: Կարծում ենք՝ օրենսդրական հետազա զարգացումները պետք է անդրադառնան նաև այս խնդրի լուծմանը:

Այս պահին պարզապես նկատենք, որ ձևավորվել են մի շարք աշխատանքային խըլ-

քեր, որոնք մշակում են դատավարական օրենսգրքերի նախագծերը և որոնց առջև դրված է հիշյալ խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ինչևէ, ներկայումս արդիական մեծ նշանակություն է ձեռք բերել ոչ միայն Կոնվենցիայի դրույթներին համահունչ օրենսդրական ակտեր ընդունելու, այլև արդեն իսկ գործող օրենսդրական ակտերը այդ փաստաթղթին համապատասխանեցնելու խնդիրը:

Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ ոլորտում արդեն իսկ շոշափելի քայլեր են կատարվում, սակայն այդ գործընթացը դեռևս համակարգված տեսքով բարեկավման կարիք ունի: Այսպես՝ վերջին շրջանում կիրառման մեջ է դրվել կոնկրետ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներից բխող օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրինագծերը, որոնք Ազգային ժողովում արդեն քննարկման են ներկայացված 2-րդ ընթերցմամբ: Այս նախաձեռնությամբ, մասնավորապես, առաջարկվում է դատարան դիմելու առնչությամբ պետական տուրքից ազատելու իրավական հնարավորություն նախատեսել ոչ միայն ֆիզիկական, այլև անհատ ձեռներցների և իրավաբանական անձանց համար: Տվյալ օրինագծերի համար իմբ է հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008թ. հունիսի 2-ի՝ «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդունել Հայաստանի գործով կայացված վճիռը:

Կարևոր է ընդգծել, որ հաճախ, իսկ վերոհիշյալ դեպքը այդ առումով բացառություն չէ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի խախտումներ են ար-

ձանագրվում այնպիսի օրենսդրական ակտերի կապակցությամբ, որոնք արտաքուստ կարծես խնդիրներ չեն առաջացրել, չեն դարձել քըննարկման առարկա, չեն համարվել ակնհայտ անիրավաչափ: Այսպես՝ որոշ դեպքերում պետական տուրքերից միայն ֆիզիկական անձին ազատելու դիրքորոշման հիմքում դրվել էր այն չափանիշը, ըստ որի՝ այդ արտոնությունը անհատ ձեռներեցին և իրավաբանական անձին վերապահելու դեպքում կխախտվեր ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված (8-րդ հոդված) ազատ տնտեսական մրցակցության սկզբունքը: Հիմա արդեն համեմատաբար հեշտ է դատողություններ անել, որ այդ դիրքորոշումն այդքան էլ իրավաչափ չի եղել և այլն, ուստի դրան չարժե անդրադառնալ:

Այս օրինակը նաև այլ բնույթի դատողությունների տեղիք է տալիս. մասնավորապես, եթե կոնկրետ Հայաստանի Հանրապետության առնչությամբ կայացված վճիռները կարող են հիմք հանդիսանալ օրենսդրական բարեփոխումների համար, ապա ինչո՞ւ նոյն դերը չեն կարող ունենալ նաև ընդհանրապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, հատկապես՝ նախադեպային դատական ակտերը: Այս առումով, Հայաստանի Հանրապետությունում խնդիր է դրված ուսումնասիրելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը և առանձնացնելու հատկապես այնպիսիք, որոնցով այնպիսի օրենսդրական դրույթներ են ճանաչվել Կոնվենցիայի խախտումներով ընդունված, որոնք նոյնական են մեր երկրի օրենսդրական ակտերին:

Համոզված ենք, որ մեր այս մոտեցումը բնավ նորույթ չէ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի լայն իրապարակայնությունը, վերջին հաշվով, միտված է ոչ միայն պետական մարմինների և, հատկապես, քրեական հետապնդում իրականացնող մարմինների և դատարանների գործունեության բարելավմանը, այլև գործող օրենսդրության բարեփոխմանը: Սակայն այս խնդիրը, առանց չափազանցության ենք ասում, համար-

վում է բարդագույններից մեկը: Միշտ չէ, որ այս կամ այն երկրի օրենսդրական ակտի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնարանությունները նոյնությամբ կիրառելի են ցանկացած այլ երկրի օրենսդրության նկատմամբ: Հաճախ, կոնկրետ որևէ օրենսդրական դրույթ համարվում է Կոնվենցիայի խախտում, սակայն նոյն այդ նորմը այդպիսին չէր համարվի, եթե տվյալ երկրի իրավական համակարգում լինեին այլ՝ լրացուցիչ իրավական դրույթներ: Այսինքն՝ իրավական նորմը բննարկման առարկա է դառնում ոչ թե մեկուսի, այլ գնահատվում է ողջ իրավական համակարգի ասպեկտով:

Այս կարգի բարդությունները նկատելի են նաև սահմանադրական դատարանի գործունեությունում: Թերևս հանգամանորեն կարելի է վերլուծել վերջերս ընդունված մի որոշում, որը խիստ արդիական է և համահունչ ընտրված թեմային: Այսպես՝ սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի առաջին մասը: Այդ նորմի իրավական էությունը այն է, որ դրանով ուղղակիորեն վարչական արդարադատության նկատմամբ «*mutatis mutandis*» սկզբունքով տարածվում են վճռաբեկ վարույթի այն բոլոր կանոնները, որոնք կիրավում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում:

Ըստ էության, այդ որոշմամբ անիրավաչափ է համարվել այն, որ եռաստիճան դատական համակարգի պայմաններում ոչ միայն վարչական դատավարության նկատմամբ կիրառվում են միայն վճռաբեկության կարգով դատական ակտերը բողոքարկելու կարգը, այլև այն, որ երկաստիճան համակարգի դեպքում դարձյալ ամբողջությամբ կիրավում են վճռաբեկության վարույթի կանոնները:

Այս որոշման ընդգծված գիտագործնական հետաքրքրությունը կայանում է, նախ, նրանում, որ սահմանադրական դատարանը,

քննարկելով վարչական դատավարության օրենսդրության դրույթների սահմանադրականության հարցը, հանգամանորեն վերլուծել է նաև դրանց առնչվող միջազգային իրավունքի, այդ բվում՝ Կոնվենցիայի նորմերը (ի դեպ, այս մոտեցումը բնավ եղակի չէ սահմանադրական դատարանի գործունեությունում): Այսպես՝ անդրադանալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004թ. դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության մասին» թիվ (2004)20 հանձնարարականի համապատասխան դրույթներին, հաճում ենք այն եզրակացության, որ հիշյալ իրավական փաստաթղթերը պարտադիր չեն համարում եռաստիճան դատական համակարգը:

Սակայն, հիշյալ միջազգային փաստաթղթերի վերլուծությունը, ըստ սահմանադրական դատարանի, բնավ սպառիչ չի պատասխանում այն հարցին, թե կոնկրետ դատական ինչպիսի^o համակարգի միջոցով կարող է ապահովել արդարադատության մատչելիությունը: Համոզված ենք, որ այս մոտեցումը գուտ տեսական վերլուծության չափանիշներով կարող է և վիճարկելի լինել, սակայն փաստն այն է, որ երկրի բարձրագույն դատական ասյանը ևս առանձին դեպքերում փաստում է, որ Կոնվենցիան ոչ միշտ է հստակ լուծումներ առաջադրում գործնականում առաջադրված խնդիրներին:

Բնորոշ է այն, որ հիշյալ որոշման պահանջներին համապատասխան Ազգային ժողովի կողմից իրականացված ձեռնարկումները սկզբնական փուլում պարզապես մատնվեցին ձախողման, քանզի այս դեպքում ևս համարժեք չեր ընկալվել այն հարցը, թե, վերջին հաշվով, ինչ ընթացակարգերով կարող է երաշխավորվել վարչական դատավարության շրջանակներում արդարադատության մատչելիությունը:

Հիշյալ որոշման հաջորդ առանձնահատկությունը այն է, որ դրանում առկա է ուղերձ Ազգային ժողովին՝ ուժը կորցրած ճանաչելու Հայաստանի Հանրապետության

օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը, որը վարչական դատարանին լիազորում է գնահատելու վիճարկվող իրավական ակտը նաև սահմանադրականության տեսանկյունից: Բնորոշ է այն, որ բուն վեճի առարկան բացարձակապես չի վերաբերել հիշյալ օրենսդրական դրույթին, այն անգամ փոխկապակցված չի եղել, սակայն անդրադարձ, այնուամենայնիվ, եղել է: Սա այն եղակի դեպքերից է, երբ սահմանադրական դատարանն օգտագործում է իրեն վերապահված իրավական լծակները՝ քննարկման առարկա օրենսդրական ակտի ընդհանրապես սահմանադրականությանն անդրադանալու համար: Ընդ որում, անդրադարձը դրսևորվում է ոչ թե որոշման եզրափակիչ, այլ՝ սուսկ վերլուծական մասում:

Այսպիսով, մենք հարկադրում ենք երբեմն իմքը ընդունելու այն իրավիճակը, որ միջազգային փաստաթղթերը ոչ միշտ են սպառիչ պատասխան տալիս կոնկրետ ներպետական իրավական համակարգում ծագած հարցադրումներին: Ընդ որում, դա ոչ թե պայմանավորված է այդ միջազգային փաստաթղթերի որակով, բնավ ոչ, պարզապես դրանցում հիմնականում անդրադարձ է արվում առավել առանցքային, հիմնարար նշանակություն ունեցող ինստիտուտներին: Բացի այդ, չենք կարող անտեսել, որ միջազգային իրավական նորմերը և սկզբունքները երբեք չեն հետապնդել և ներկայումս չեն հետապնդում ներպետական ողջ օրենսդրական համակարգը միասնական դարձնելու նպատակ: Կարենոր սկզբունքները սահմանեն են, որոնք արդեն տարաբնույթ իրավական երաշխիքներով պետք է գործեն կոնկրետ այս կամ այն երկրում:

Կոնվենցիայի ներազդեցության կարևոր բաղադրատարրերից է նաև միջազգային փորձաքննության ինստիտուտը: Սա, թերևս, լրացնում է նախորդ գործոնը և, միաժամանակ, իր դեֆակտ կիրառմանը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ միայն Մարդու իրավունքների նվազական դատարանի դատական ակտերը բավարար նյութ չեն պարունակում լիարժեք իրավաստեղծ գործունեության համար: Բնա-

կանաբար, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիշյալ դատարանը փորձագիտական հիմնարկ չէ, և չի կարող իր նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձնել Կոնվենցիայի որևէ դրույթի առնչությամբ ծագած տարածայնությունները և դրուս գալ կոնկրետ գանգատի քննարկման առարկայից: Բացի այդ, դատական ակտերը ևս տարբներությունների տեղիք են տալիս, ինչը ոչ թե պայմանավորված է նրանց որակով, այլ այն փաստով, որ դրանք անմիջականորեն չեն փոխկապակցվում, օրինակ, մշակվող օրինագծի դրույթների հետ:

Գործնականում միջազգային փորձագետներին են ներկայացվում ոչ միայն օրինագծեր, այլև արդեն իսկ ընդունված և վաղուց գործող օրենսդրական ակտեր: Վերջին տարրերակը հատկապես կիրառվում է այն դեպքում, երբ իրավաստեղծ գործունեությունում իրավասուու որևէ մեկը նախաձեռնում է գործող օրենսդրական դրույթը վերանայելու գործընթաց, պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում Կոնվենցիային, մինչդեռ իրավասուու մարմինները հակադարձում են այդ նախաձեռնությանը: Բնորոշ է, օրինակ, Ազգային ժողովի պատգամավոր Զ. Փոստանջյանի կողմից դեռևս 2008թ. փետրվարին ներկայացված օրինագիծը, որով առաջարկվում էր ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է սահմանում Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերի համար: Ընդ որում, հիմնական փաստարկն այն էր, որ այդ օրենսդրական դրույթը հակասում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված արտահայտվելու ազատությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդ նախաձեռնության առնչությամբ խորհրդարանին ներկայացրեց բացասական եզրակացություն և քերեց մի շարք հիմնավորումներ: Նախ մատնանշվեց, որ Սահմանդրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Իշ-

խանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Բացի այդ, ներկայացվեց դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը արտահայտվելու ազատությունը չի համարում բացարձակ և հնարավոր է համարում որոշ սահմանափակումներ՝ «պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու նպատակով»:

Ինչևէ, այդ փաստարկները հեղինակի և մարդու իրավունքների պաշտպանի կողմից բավարար չղիտվեցին, ինչի արդյունքում այդ օրինագիծն ուղարկվեց Վենետիկի հանձնաժողովի քննարկմանը: Հիշյալ միջազգային փորձագիտական կառույցը միանշանակ եզրակացությունը, այնուամենայնիվ, այդ օրենսդրական դրույթը դարձավ լայն քննարկման առարկա՝ արդեն իշխանությունների նախաձեռնությամբ, ինչի արդյունքում, վերջերս արդեն երկրորդ ընթերցմանը ընդունվեց օրենք, որով փոփոխություններ կատարվեցին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 225-րդ, 300-րդ և 301-րդ հոդվածներում:

Տվյալ դեպքում խիստ տրամաբանական է թվում այն հարցը, թե ինչո՞ւ իշխանությունները բարեփոխման նկատառումով անդրադան վերը նշված օրենսդրական ակտերին և արդյո՞ք այս գործելածը չի կարող օրինաչափության վերածվել և կիրառվել նաև հետագա-

յում: Առաջին հարցին, թերևս, կարելի է պատասխանել հետևյալ կերպ. օրենսդրական ակտի իրավաչափությունը պայմանավորված է ոչ միայն համարժեք խմբագրությամբ, այլև՝ իրավակիրառական պրակտիկայով: Նկատի ունենք այն, որ հաճախ, իսկ դրան երբեմն նպաստում է անհարկի լարված ներքաղաքական իրավիճակը, օրենսդրական որոշ դրույթներ իրենց ոչ բավարար հատակության պատճառով լուրջ տարրներցումների տեղիք են տալիս: Ներքաղաքական իրավիճակը տվյալ դեպքում նշում են այն իմաստով, որ իրավակիրառական պրակտիկայի նկատմամբ ձևավորվում է անբավարար վստահության մքննորդություն: Երկրորդ հարցի պատասխանը, թերևս, բխում է նախորդ հարցի պատասխանից, այն է՝ այո, կարելի է դարձնել տարածված գործելառություն:

Վերը նշված դատողությունների հիմնավորման համար մատնանշենք Վենետիկի հանձնաժողովի՝ 2008թ. հունիսի 13-14-ի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխությունների նախազդի վերաբերյալ» որոշումից հետևյալ եզրահանգումը. «Զենական առումով քննարկվող դրույթը անհամատեղելի չի բվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ, եթե այն ճիշտ մեկնարանվի և կիրառվի: Այն փաստը, որ իրավական դրույթն ընդունելի է, դեռևս չի նշանակում, որ այն չի կարող չարաշահվել՝ քննարկվող դրույթը խախտելու վերաբերյալ բավարար ապացույցներ չինելու պարագայում անգամ մարդկանց անհիմն քրեական հետապնդման ենթարկելու եղանակով ընթացիկ օրենսդրությունը³:

Իրավակիրառական պրակտիկան որպես չափանիշ ընդունելը ներկայումս լայն տարածում ունի նաև սահմանադրական դատարանի գործունեությունում: Կարելի է բերել տասնյակ օրինակներ, երբ սահմանադրական դատարանը, սկզբունքային տարածայնություններ չունենալով նորմի խմբագրության հետ, այն հակասահմանադրական է ճանաչել ոչ իրավաչափ իրավակիրառական պրակտիկա ձևավորվելու հիմքով: Տվյալ դեպքում հարկ է լինում վերանա-

յել օրենսդրությունը և հստակ սահմանել այնպիսի նորմեր, որոնք պարզապես կբացառեն անիրավաչափ իրավակիրառական պրակտիկան:

Ի դեպք, միջազգային փորձագետների եզրահանգումները միշտ չեն, որ համարժեքորեն հաշվի են առնվում, ինչը պայմանավորված է տարաբնույթ պատճառներով: Օրինակ՝ լայն տարածում ունի այն երևոյթը, երբ օրինագիծը մշակելիս հաշվի է առնվում երկրի ներսում ձևավորված իրավագիտակցության աստիճանը, նույնիսկ նշանակություն է տրվում այն գործոնին, թե որքանով է ընկալումը քաղաքականացված: Այսպես՝ պատասխանելով «Առավոտ» օրաբերի այն հարցին, թե ինչո՞ւ է փորձագետների հավանությանն արժանացած դրույթը հանվել օրինագիծից, Ազգային ժողովի պետական-իրավական հանձնաժողովի նախագահը տվել է հետևյալ պատասխանը. «Թեև դա այդպես է, և այդ դրույթն ունի կանխարգելիչ նշանակություն, այնուամենայնիվ, նախաձեռնության հեղինակների կարծիքով, այս փուլում թերևս նպատակահարմար չէր տվյալ դրույթի ներմուծումը՝ հաշվի առնելով օրենքի այս փոփոխության նկատմամբ փոքր-ինչ ծայրահեղ, քաղաքականացված ընկալումը (ընդգծումը մերն է - Է.Դ.)⁴»:

Կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չի լինի միանշանակ պնդել, որ ձևավորված իրավագիտակցությունը առավել հակված է միջազգային իրավունքի չափանիշները հնարավորինս սահմանափակ ընկալելուն: Այս դեպքում դարձյալ իրեն զգացնել է տալիս, այսպես կոչված, մասնագիտական հոգեբանությունը, որի դեպքում հաճախ դատողություններ անելիս դեկավարվում են ոչ այնքան օբյեկտիվ, որքան՝ գերատեսչական նկատառումներով: Երբեմն էլ իրեն զգացնել է տալիս զուտ քաղաքական հաշվարկներով զուգորդված եզրահանգումներ ներկայացնելու միտումը:

Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել վերը նշված եզրահանգումը հիմնավորելու համար, սակայն, հաշվի առնելով խնդրի առանձնահատկությունը և թեմայի հետ սույն մասսամբ

առնչվելու հանգամանքը, բավարարվենք հետևյալ օրինակով: Քրեական հետապնդում իրականացնող մարմինները հակված են այն տեսակետին, ըստ որի կալանքը, որպես խափանման միջոց, կարող է կիրառվել նաև զուտ հանցագործության ժանրության հիմքով: Ի դեպ, այս տեսակետը ներկայումս իր ամրագրումն ունի նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում. «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեքդրերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտի մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով» (134-րդ հոդվածի 1-ին մաս):

Բոլորովին այլ կարծիքի են դատավորներն ու փաստարանները, մասնավորապես դատական ակտերի և այդ առնչությամբ փաստաբանների միջնորդությունների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ վերջիններս հակված են մոտեցմանը, ըստ որի առանձին վերցրած հանցագործության ծանրության հատկանիշը հիմք չէ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Մտահոգող տվյալ դեպքում այն է, որ վերը նշված երկու տեսակետներն ել, ըստ էության, ոչ միայն ակնհայտ միտումնավոր են, այլև՝ պարզունակ: Հարցի պատասխանը իրականում քիչ առնչություն ունի այդ մոտեցումների հետ և գտնվում է միջին հարքության վրա: Այսպես՝ ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի, հանցագործության ծանրության հանգամանքը ևս կարող է հիմք հանդիսանալ, սակայն, դա ենթադրում է բացառիկ իրավիճակ. «Միայն իրավախախտման ծանրությունը հաշվի առնելը բավարար չէ: Այնուհանդերձ, այս հիմքը կարելի է օգտագործել միայն այն դեպքում, եթե դատավորը կամ կալանքի որոշում կայացնելու համար օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձն իր որոշումը հիմնում է

այնպիսի փաստերի վրա, որոնց օգնությամբ կարելի է ցույց տալ, որ մեղադրյալի ազատ արձակումն իսկապես կխաբարի հասարակական կարգուկանոնը⁵»:

Ասվածից բխում է, որ հանցագործության ծանրության հիմքը պետք չէ, որ ուղեկցված լինի այլ լրացուցիչ այնպիսի հիմքերով, ինչպիսիք են՝ դատաքննությանը խոչընդոտելը, քննությունից խուսափելը և այլն: Դրա փոխարեն դատարանը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքի վրա, որ որոշ դեպքերում ծանր հանցագործության մեջ կասկածվող անձին չկալանավորելը կարող է հանգեցնել արդարադատության նկատմամբ հասարական այնպիսի անսպասելի բացասական և սուր դրսերվող վարքագծի, ինչը հղի է հասարական կարգուկանոնի խաթարման վտանգով:

Այս դատողության հիմքում ընկած է, մասնավորապես, Լեսելիիերն ընդդեմ Ֆրանսիայի գործը: Ըստ այդ գործով կայացված վճռի. «Չնայած այնպիսի ծանր հանցագործության կապակցությամբ հակազդեցության հնարավորությունը, ինչպիսին սպանությունն է, լինի դատուժողի հարազատների, թե ողջ քնակչության կողմից, կարող է բավարար լինել հետևանքների առումով մտավախության հիմնավորման համար: Կոնկրետ անկարգություն չի բացահայտվել, և, իրոք, հանգույցյալի մայրն ու քույրը դեմ չեն հայցվորի՝ կալանքից ազատ արձակվելուն⁶:

Այն, որ տվյալ դեպքում հասարակական կարգի պահպանություն ասելով նկատի է ունեցվում նաև տուժողների կողմից վրեժխնդիր լինելու փաստական հանգամանքը, հիմնավորվում է մեկ այլ գործով. «Տուժողի հարազատների կողմից վրեժ լուծելու վերաբերյալ մտավախությունն անհիմն էր Ի.Ա.-ի ընդդեմ Ֆրանսիայի գործով դատավարությունում, քանի որ նման հատուցման հնարավորությունը քիչ հավանական էր թվում, որովհետև նրանցից շատերը բնակվում էին Լիբանանում»:

Վերը նշված հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ, նախընտրելի ենք համարում հետևյալ առաջարկությունները՝

- նպատակահարմար է վերանայել գործող իրավական ակտերը և դրանց նախագծերը վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխանեցնելու վերաբերյալ օրենսդրությունը, բացառել առավելությունը միայն միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին վերապահելը,

- հարկ է ընդլայնել իրավական ակտերի նախագծերի պետական և մասնագիտական փորձաքննության ենթակա հարցադրումների շրջանակը՝ ներառելով նաև վավերացված միջազգային պայմանագրերին դրանց համապատասխանության հարցը,

- միջազգային փորձագետներին օրինագծեր ներկայացնելիս պարտադիր պայման պետք է համարել դրանց վերաբերյալ հիմնավորումները, առկա տարածայնությունները, ինչպես նաև դրանց հիմքում ընկած Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշումների քաղվածքները ներկայացնելը,

- նպատակահարմար է իրավաստեղծ գործունեության հետ առնչվող բոլոր հանրային ծառայողների համար կազմակերպել նպատակային ուսումնական դասընթացներ, որոնց հիմնական նպատակը կլինի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերում ամրագրված հիմնադրույթների ուսումնասիրությունը,

- արդյունավետ կարող է համարվել Հայաստանի դեմ կայացված յուրաքանչյուր դատական ակտի պահանջների արդյունավետ կատարման նկատառումով քննարկման հրստակ ընթացակարգ նախատեսելը, մասնավորապես՝ ներառելով դրանց առնչությամբ գոր-

ծող օրենսդրությունում փոփոխություն կատարելու կամ նոր իրավական ակտեր ընդունելու, մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու և նմանաբնույթ այլ հարցերը:

Բնականաբար, նշված նկատառումները հազիվ թե սպառիչ լուծում տան առկա խնդիրներին, սակայն, իրավաստեղծ գործունեության ներկա փուլում, կարծում ենք, դրանք կարող են որոշակիորեն նպաստել օրենսդրության որակի բարձրացմանը, ապահովել անհրաժեշտ պատասխանատվություն իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում:

Անփոփելով ներպետական օրենսդրության վրա Կոնվենցիայի ներազգեցության հիմնախնդիրներին առնչվող հիմնահարցերի վերլուծությունը, հարկ ենք համարում նկատել, որ այդ գործընթացը ակնհայտ շարունակական է: Ընդ որում, հարկ կլինի ոչ միայն վերանայել այն օրենսդրական դրույթները, որոնք ներկայումս ձևավորված իրավական չափանիշներով են համարվում խոցելի, այլև այնպիսիք, որոնք գոնե այս պահին վիճարկելի չեն համարվում: Իրավունքը դոգմա չէ, իսկ իրավական դրույթների վերաբերյալ եզրահանգումները և տարարընույթ բնորոշումները ևս քարացած չեն, ու հաճախ է հարկ լինում վերահմաստավորել դրանք, ներդնել նոր բովանդակություն ու ուղղվածություն: Կարծում ենք՝ իրավական տեսակետների ու հայացքների զարգացման, իսկ երբեմն դրանց վերանայման միտումը նկատելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեությունում:

¹ Տե՛ս Աբաշидզե Ա.Խ. , Ալիսիևիչ Ե.Ս. Право Совета Европы. Конвенция о защите прав человека и основных свобод: Учебное пособие. - М.: Международ. отношения, 2007. С. 36-37.

² Տե՛ս Mauer B. Le principe de respect de la dignité humaine et la Convention européenne des droits de l'homme, Mintpellier: Universite Montpellier, 1988. P. 56.

³ Տե՛ս Joint Opinion on tye amendments of 17 March 2008 to the Law on Conducting Meetings, Assemblies, Rallies and Demonstrations of the of Armenia by the Venice Commission and OSCE/ODIHR by the Venice Commission at its 75th Plenary Session (Venice, 13/06/2008-14/06/2008) .

⁴ Տե՛ս «Վիճահարույց դրույթը հեղինակները հանել էին օրենքից», «Առավոտ» օրաթերթ, 52/34098, 21-ը մարտի 2009թ.

⁵ Տե՛ս Հղշարյան Վ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, ուսումնական նյութերի ժողովածու: Երևան, 2007, էջ 238-329:

⁶ Տե՛ս Լեստելիերն ընդդեմ Ֆրանսիայի գործը, 12369/86, 26-ը հունիսի, 1991թ.:

⁷ Տե՛ս Ի.Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործը, 7652/77, 24-ը հունիսի, 1992թ.:

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության մարդու իրավունքների եվլոպական դատարանի հետ կապերի վարչության քաղաքացիական և տնտեսական գործերով բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու



ՀԱՍՎՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ԾՈՒՐՁ

Տեղական ինքնակառավարման մասին եվլոպական խարտիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամներն ընտրված են ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի և համընդիանուր քվեարկությամբ: ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածը նշում է. «Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայքնի ղեկավարի միջոցով...»:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածն ամրագրում է, որ ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական իրնենակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված լիազորությունները:

Համայնքի ավագանու գործունեությանն առնչվող հարցերն ուսումնասիրելու նպատակով, կարծում ենք, ճիշտ կլինի անդրադառնալ ինչպես համայնքի ավագնու գործունեությանն ընդհանրապես, այնպես էլ Երևանի ավագանու գործունեությանը մասնավորապես՝ հաշվի առնելով Երևանի ավագանու գործունեության որոշ առանձնահատկություններ:

Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը նշում է, որ ավագանին գործում է իր կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների, խմբակցությունների աշխատանքի միջոցով:

Համայնքի ղեկավարը համայնքի նըստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ օրենքով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար¹:

Համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական ձևը նիստերն են, որոնցում արտահայտվում է համայնքի ավագանու գործունեության կողեզիալության սկզբունքը և իրականացվում են համայնքի բնակչության շահերը: Նիստերը լինում են հերթական և արտահերթ: Հերթական նիստերը գումարվում են ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ, այսինքն նիստերի անցկացումը պարտադիր է²: Սովորաբար համայնքների ավագանիներն իրենց կանոնակարգերում նշում են հերթական նիստ անցկացնելու կոնկրետ օրը և ժամը: Օրինակ՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ համայնքի ավագանու կանոնակարգով³ սահմանվում է, որ համայնքի ավագանու հերթական նիստերը գումարվում են փետրվար, ապրիլ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր, դեկտեմբեր:

ամիսների վերջին չորեքշաբթի օրերը՝ ժամը 10-ից մինչև 18-ը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը նշում է, որ ավագանու հերթական նըստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին։ Նստաշրջանի ընթացքում հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ։ Նիստերի օրերը որոշում է ավագանին։

Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը, որոնք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք։ Երևանի ավագանու նիստը հրավիրում և վարում է քաղաքապետը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ քաղաքապետի առաջին տեղակալը։

Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին։ Երևանի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ։

Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում համայնքի ավագանու նիստի իրավագորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու՝ նիստին ներկայացած անդամները (օրենքի 14-րդ հոդված)։

Այս առումով պետք է նշել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը առավել նպաստավոր դրույթ է բովանդակում, որը հնարավորություն է ընձեռում նիստը հրավիրողի (վարողի) բացակայության պայմաններում խուսափել նիստի չկայացումից։ Մասնավորապես, նշված օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայա-

նալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը»։ Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում ևս նման դրույթ ներառել, ինչը հնարավորություն կտա համայնքի ղեկավարի կամ նրա պաշտոնակատարի բացակայության պայմաններում ավագանու նիստ անկացնել, առավել ևս, որ համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը համայնքի ավագանու նիստի ժամանակ վճռական ձայնի իրավունք չունեն։

Համայնքի ավագանու արտահերթ նիստ գումարում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնը-վազն մեկ երրորդի նախաձեռնությամբ (օրենքի 15-րդ հոդված)։

Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից։

Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծերը։ Յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները⁴։

Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագըծերը և համապատասխան փաստաթղթերը նիստը սկսելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին (օրենքի 12-րդ հոդված)։

Համայնքի ավագանու որոշումները և ուղերձներն ըմբռնվում են ավագանու՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ (օրենքի 14-րդ հոդված)։ Ընդհանուր այս կանոնից բացառություն է արված համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկու-

թյան մասով, որը սկսվում է ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի գրավոր նախաձեռնությամբ, իսկ ընդունված է համարվում, եթե դրա օգտին են քվեարկել ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին (հոդված 17)⁵:

Համայնքի ավագանու նիստերը հիմնականում դուռաց են: Դրանց կարող են մասնակցել համայնքի բնակիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի դեկավարի աշխատակազմի պաշտոնատար անձինք, պետական իշխանության մարմինների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլն: Առանձին դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ձայնների երկու երրորդի որոշմանը կարող է անցկացվել դուռփակ նիստ (հոդված 14)⁶:

Այս առումով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը ևս տարբերվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքից: Մասնավորապես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը նշում է. «Ավագանու նիստը հրապարակային է: Ավագանու կանոնակարգով սահմանված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայնների առնվազն կեսով ընդունված որոշմանը կարող են անցկացվել դուռփակ քննարկումներ»: Տվյալ պարագայում սույն օրենքը Երևանի ավագանուն հնարինություն է տալիս ոչ թե ամբողջ նիստն անցկացնել դրնփակ, այլ միայն ավագանու կողմից լրիծման ենթակա այս կամ այն հարցի քննարկումները: Բացի այդ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը հստակ նշում է, որ ավագանու դուռփակ քննարկումների անցկացնելու դեպքերը պետք է սահմանվեն ավագանու կանոնակարգով, ինչ մասին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նշում չկա:

Նիստերը կարող են լինել լիակազմ, եթե աշխատանքներին մասնակցում են ավագանու բոլոր անդամները միաժամանակ, և հանձնա-

ժողովներում անցկացվող, որոնց ընթացքում ավագանու անդամները քննարկում են հետագայում ավագանու վերանայմանը ներկայացվող հարցերը:

Օրենքի 11-րդ հոդվածում ամրագրված է, որ համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմանը կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Չնայած այս հանգամանքին՝ ո՞չ օրենքը, ո՞չ էլ ավագանիների կանոնակարգերը չեն անդրադառնում մշտական հանձնաժողովների կազմակերպման, գործունեության կարգերին, իրավասությանը և այլ խնդիրների, ինչից երևում է, որ օրենքի՝ հանձնաժողովներին վերաբերող դրույթը ձևական բնույթ է կրում: Ավելին, բազմաթիվ համայնքներում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանցից ոչ մեկում մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ չեն ձևավորվել:

Միենայն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը մանրամասն կարգավորում է Երևանի ավագանու հանձնաժողովների ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ավագանին իր իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, ինչպես նաև ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է ոչ ավելի քան 4 մշտական հանձնաժողովներ (հոդված 33): Ավագանու առանձին որոշումների, հայտարարությունների, ուղերձների նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ ավագանուն եզրակացություններ կամ տեղեկանքներ ներկայացնելու համար ավագանու որոշմանը կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ (հոդված 34):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը մշտական և ժամանակավոր հանձնաժողովներից բացի

նախատեսում է նաև քննող հանձնաժողովի ստեղծման հնարավորություն՝ նշելով, որ ավագանու որևէ խմբակցության պահանջով Երևանում տեղական ինքնակառավարմանը վերաբերող հասարակական հետաքրքրություն ներկայացնող փաստեր պարզելու նպատակով ստեղծվում է ժամանակավոր քննող հանձնաժողով: Խմբակցությունը քննող հանձնաժողովը ստեղծելը կարող է նախաձեռնել օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ (հոդված 35): Կարծում ենք՝ օրենքի նման ձևակերպումը ընդունելի չէ, քանի որ մեկ օրացուցային տարվա ընթացքում հնարավոր է, որ մի քանի անգամ ժամանակավոր քննող հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտություն առաջանա, և, փաստորեն, տվյալ տարվա ընթացքում արդեն իսկ նման հանձնաժողով կազմավորելու նախաձեռնություն ցուցաբերած խըմբակցությունը զրկվում է կրկին անգամ այդպիսի հանձնաժողով ստեղծելու պահանջի իրավունքից:

Երևանի ավագանու մշտական հանձնաժողովների գործունեության կարևոր երաշխիք է հանդիսանում համապատասխան օրենքի դրույթը, համաձայն որի քաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանների ղեկավարը, Երևանի ենթակայության կազմակերպությունները ավագանու մշտական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով պարտավոր են հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ (հոդված 33, 6-րդ մաս):

Մշտական հանձնաժողովն իր նիստին կարող է հրավիրել քննարկվող հարցին առընչվող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (հոդված 33, 7-րդ մաս): Այս դրույթները տարածվում են նաև ժամանակավոր և ժամանակավոր քննող հանձ-

նաժողովների վրա:

Կարծում ենք, որ Երևանի ավագանու հանձնաժողովների գործունեության փորձը լավ հիմք կհանդիսանա «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու համար, ինչը կնպաստի ամբողջ հանրապետությունում (հատկապես մեծ համայնքներում) հանձնաժողովների՝ որպես գործուն կառուցակարգերի կայացմանը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին բաղկացած է՝

- 1) հինգ անդամից՝ մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում,
- 2)յոթ անդամից՝ 1001-ից մինչև 3000 բնակչություն ունեցող համայնքներում,
- 3) տասնմեկ անդամից՝ 3001-ից մինչև 20000 բնակչություն ունեցող համայնքներում,
- 4) տասնինգ անդամից՝ 20001-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում:

2005թ. նոյեմբերի 27-ին կայացած սահմանադրական հանրաքվեի արդյունքում հանվեց Սահմանադրության այն դրույթը, համաձայն որի՝ ավագանու անդամների թիվը չի կարող գերազանցել 15-ը: Նման պարագայում, կարծում ենք, ճիշտ կլիներ, որ ընտրական օրենսգրքում ավագանու անդամների թիվը ընդլայնվեր (իհարկե, մեծ բնակչություն ունեցող համայնքներում):

Համայնքի ավագանու անդամների կազմի ընդլայնումը կբարձրացնի նրա գործունեության արդյունավետությունը, քանի որ համայնքի ավագանին, որպես տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին, օժտված է տեղական կյանքի քաղմարիկ կարևոր հարցեր լուծելու լիազորություններով, ընդունում է մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ-իրավական ակտեր: Համայնքի ավագանու անդամների թվաքանակի ընդլայնումը կնպաստի համայնքի բնակչության ավելի մեծ ներկայացուցչական ապահովմանը և կիսթանի մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների ձևավորմանը:

Համայնքի ավագանու կարեոր դերի մասին է խոսում այն, որ օրենքի 11-րդ հոդվածով ավագանուն իրավունք է վերապահվում իր նիստում քննարկել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Չննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: Օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:

Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի դեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմիններին:

Պետական մարմինները կամ համայնքի դեկավարը ավագանու ընդունած ուղերձը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են քննության առնել և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն: Սա կարեոր երաշխիք է համայնքի ավագանու բնականոն գործունեության ապահովման համար:

Խոսելով համայնքի ավագանու գործունեության մասին, կարծում ենք, տեղին կլիներ անդրադանալ Երևանի ավագանու՝ հանրաքենական աշխատավորության մասին: Մասնավորապես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածն ամրագրում է. «Ավագանին տեղական հանրաքենական մասին որոշումն ընդունում

է ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ քաղաքապետի նախաձեռնությամբ՝ ավագանու անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ:

Ավագանին իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ բնակչության կարծիքը պարզելու նպատակով մինչև հարցի լուծումը կարող է անցկացնել հանրային լսումներ, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով նշանակել հանրաքվե, որի արդյունքները պարտադիր բնույթ չունեն:

Այս հանրաքվեները անցկացվում են ավագանու սահմանած կարգով»: Օրենքը չի կարող Երևանի ավագանուն նման լիազորություն վերապահել, դա հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 7-րդ կետին, համաձայն որի՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում հանրաքվեների, Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը: Հետևարար, նշված օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությամբ նախատեսված նորմի գործողությունը պետք է դադարեցվի: Առավել ևս, որ տեղական հանրաքվեի կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները մանրամասն կարգավորված են 2002թ. փետրվարի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

¹ Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սխալ է ձևակերպված և նախադասության սկզբում «Համայնքի դեկավարը համայնքի» բառերից հետո պետք է լինի «ավագանու» բառը: Նույն սխալն առկա է նաև օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ նախադասության սկզբում «Համայնքի» բառի փոխարեն պետք է լինի «Տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը:

² Սիամանական ավելացնենք, որ օրենքը չի անդրադանում այն հարցին, թե ինչպիսի իրավական հետևանքներ կարող են առաջանալ սահմանված ժամկետներում համայնքի ավագանու նիստ չգումարվելու դեպքում: Տվյալ պարագայում, կարծում ենք, ճիշտ կլիներ օրենքում նախատեսել համայնքի ավագանու լուծարում: Օրենքում պետք է սահմանվեն այն ժամկետները, որոնց ընթացքում համայնքի ավագանու նիստեր չգումարվելու դեպքում պետք է նման հարց բարձրացվի, ինչպես նաև նախատեսվի համայնքի ավագանու լուծարման ընթացակարգը:

³ Երևանի քաղային համայնքների իրավական ակտերի տեղեկագիր, 2003/4(5), 23.05.03:

⁴ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասը թերի է շարադրված և ճիշտ կլիներ դրանում ավելացնել, որ նշված փաստարդերի հետ մեկտեղ անհրաժեշտ է ներկայացնել նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում ամրագրված, նորմատիվ իրավական ակտերի նախագծեր ներկայացնելու համար անհրաժեշտ մյուս բոլոր փաստարդերը:

⁵ Կարծում ենք՝ ճիշտ կլիներ, եթե համայնքի զարգացման քառամյա ծրագրի և բյուջեի հաստատման համար նույնական պահանջվեր ավագանու անդամների ընդիանուր թվի կեսից ավելին:

⁶ Օրենքի նման ձևակերպումը, կարծում ենք, ճիշտ չէ, և համայնքի ավագանին ցանկացած ժամանակ, առանց որոշակի հիմքերի առկայության, կարող է դրնիքակ նիստ անցկացնել: Առավել նպատակահարմար կլիներ, որ օրենքում հստակ սահմանվեին դրնիքակ նիստ անցկացնելու հիմքերը: Օրենքում չի նշվում նաև, թե ովքեր իրավունք ունեն ներկա գտնվելու համայնքի ավագանու դրնիքակ նիստին: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության «Լատախսազուրյան մասին» օրենքի 7-րդ հոդվածում նշվում է, որ դատախազներն իրավունք ունեն մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմնի նիստերին, այդ բվում՝ դրնիքակ:

ՀԵՂԻՆԵ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական



ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Անկախություն նվաճած Հայաստանի Հանրապետությունն անխուսափելիորեն պետք է ձեռնամուխ լիներ քաղաքական, տրնտեսական և իրավական նոր համակարգերի ստեղծմանը և դրանց համարունչ իրավական բարեփոխումների իրականացմանը: Այդ գործընթացներում կարևոր և առանձնահատուկ տեղ է հատկացվում դատաիրավական բարեփոխումներին, այդ թվում՝ սահմանադրական, օրենսդրական, ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումներին, հանրային կառավարման նոր համակարգի ձևավորմանը և օրենսդրական դաշտի ընդլայնմանը, որը ժողովրդավարական հասարակության ստեղծման կարևոր նախապայմաններից է: Այդ կապակցությամբ հարկ եղավ Խորհրդային Սիությունից ժառանգած օրենսդրությունը փոխարինել սկզբունքային նոր մոտեցումներով՝ նպաստելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դերի բարձրացմանը:

Այսպես՝ 1995 թվականի հուլիսի 5-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունմամբ հիմք դրվեց դատաիրավական բարեփոխումների բուն գործընթացին, որը նպաստակ ուներ բարելավելու իրավական դաշտը և նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը:

Լավատեղյակ լինելով Հայաստանին, ինչպես նաև հետխորհրդային բոլոր պետություններին հատուկ օրենսդրական համակարգային խնդիրներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամություն հայտնեց համագործակցել միջազգային տարբեր հեղինակավոր կառույցների, հատկապես

Եվրոպայի խորհրդի հետ՝ այսպիսով, հիմք դնելով նոր ավանդույթի ձևավորմանը, այն է՝ Եվրոպայի խորհրդի և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության արդյունավետության բարձրացման բնագավառում կարևորելով Եվրոպական կառույցների կողմից բարեփոխումների և խորհրդատվական բնույթի առաջարկությունների կատարումը, փորձագետների կամ փորձագիտական խմբերի ներգրավումն ազգային օրենսդրական բարեփոխումների ընթացքին, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության ընթացքում միջազգային փորձի կիրառումը:

Ինչպես գիտենք, Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի անդամ 2001 թվականին և անդամակցությունից ի վեր Հայաստանի նկատմամբ կիրառվել է Խորհրդարանական Վեհաժողովի մոնիթորինգի ընթացակարգ, որի արդյունքում ընդունվել են 1994(2002), 1361(2004), 1994(2004), 1405(2004) և մի շարք այլ բանաձեր: Հայաստանի սահմանադրական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ թիվ 1458 բանաձերի արդյունքում 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական համարվեն հնարավոր դարձրեց սահմանադրական բարեփոխումների ընդունումը, և այս բարեփոխումները կյանքի կոչելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրի իրականացման գործընթացում մեծ գնահատաճրի կարող է արժանանալ Եվրոպայի խորհրդի, մասնավորապես իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) լուրջ օժանդակու-

թյունը: Վենետիկի հանձնաժողովի հետ սերտ համագործակցության շրջանակներում մշակված օրենսդրական ակտերն արդեն իսկ համահունչ են ժողովրդավարության և իրավունքի գերիշխանության եվրոպական չափանիշներին և սկզբունքներին, որով իսկ նոր նախադրյալներ են պարունակում Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործառույթների ապահովման համար: Ավելին, դրանք Հայաստանին հնարավորություն են տալիս առաջընթաց արձանագրել ժողովրդավարության, իրավունքի գերիշխանության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Հայաստանի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար պարտադիր հանդիսացող կանոնադրական պահանջների բավարարման ուղղությամբ:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում օրինաստեղծ գործունեության ընթացքում հատկապես մեծացել է միջազգային փորձի, այն է՝ Արևմտյան Եվրոպայի, ինչպես նաև Սերմանական երկրների օրենսդրության ուսումնասիրման և այդ փորձի ներդրման հանդեպ հետաքրքրությունը: Դա, իիրավի, պայմանավորված է այդ ոլորտի կարևորությամբ և Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի ստանձնած պարտավորություններով, ինչպես նաև այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, անկախ փորձագետների և միջազգային կազմակերպությունների ակտիվ աշխատանքով: Արտահայտվում են տարբեր տեսակետներ դատաիրավական բարեփոխումների իրականացման գործընթացի շարունակական և հետագա զարգացումների վերաբերյալ, կազմակերպվում են քննարկումներ, հասարակական լսումներ, սեմինարներ այս կամ այն հարցի շուրջ՝ որպես ելակետ ընդունելով այնպիսի հիմնական պահանջներ, ինչպիսիք են՝ բարեփոխումների դիտարկումներն ըստ միջազգային և տեղական մակարդակների, բարեփոխումների համադրումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին և ցուցանիշներին և, ի վերջո, բարեփո-

խումներին ուղղված առաջարկությունների կատարումը: Արդյունքում, նմանատիպ համատեղ քննարկումները հերթական անգամ ապացուցում են, որ դատաիրավական ոլորտի բարեփոխումները Հայաստանում կատարվում են համակարգային և համալիր մոտեցումների առկայության պայմաններում՝ առաջացած խնդիրները դիտարկելով փոխադարձ կապի և միասնական զարգացումների համատերատում: Իհարկե, առանց նշված պայմանների դատաիրավական բարեփոխումներն էական արդյունքներ ունենալ չեն կարող:

Այսպիսով, վերը նշված իրավաստեղծ գործունեության կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև օրինագծների պատրաստումը մեր երկրում կատարվում է համատեղ ջանքերի շնորհիվ՝ ուազմավարական նշանակություն հաղորդելով դրանց, «համախմբելով» թե՛ ներպետական, թե՛ միջազգային օրենսդրության հիմնական խնդիրները՝ լուծելու օրինաստեղծ գործունեության բնագավառում ծառացած հիմնախնդիրները: Միջազգային փորձի կիրառումը և ներդրումը ներպետական օրենսդրության մեջ, ինչպես նաև օրենսդրության փոփոխությունները կամ նոր ընդունվող օրենսդրական ակտերը միջազգային փորձաքննության ներկայացնելը և սերտ համագործակցությունը միջազգային փորձագետների հետ էական նշանակություն ունեցող քայլ է, որը կարող է նպաստել մասնակցային և ժողովրդավար կառավարման համակարգի զարգացմանը և իրավական դաշտի հզորացմանը:

Սեր երկրում սկսված և ընթացող դատաիրավական բարեփոխումների գործընթացում իր գործուն դերակատարությունն ունի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Այստեղ կազմվում են մի շարք օրենսդրական ակտերի նախագրծեր, որոնց շնորհիվ իրենց իրավական կարգավորումն են ստանում այս կամ այն ոլորտին վերաբերող հիմնահարցերը: Եվ իհարկե, այս իրավաստեղծ գործունեության ընթացքում այստեղ կիրառվում է արդեն իսկ ձևակորված այնպիսի ավանդույթ, ինչպիսին է՝ միջազգա-

յին օրենսդրության լայնածավալ և խորն ուսումնասիրումը և ներպետական օրենսդրության պահանջներին համապատասխան միջազգային նորմերի կիրառումը՝ իհարկե, հաշվի առնելով ներպետական օրենսդրության սկզբունքային դրույթների առանձնահատկությունները, սոցիալ-քաղաքական պահանջները, միջազգային չափանիշները կիրառելու միտումները, օրենսդրության զարգացման առավել ընդունելի ուղիները, բացառությամբ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող դրույթների:

Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարությունում հանգամանալից ուսումնասիրվում են Եվրամիության անդամ երկրների, Սերձբալթյան երկրների, ինչպես նաև հետխորհրդային պետությունների օրենսդրությունը, ներմուծվում են այնպիսի նորմեր, որոնք համարունչ և կիրառելի են Հայաստանի Հանրապետության համար և բխում են իրավիճակի կարգավորման բնույթից: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպիսի ձևավորված պրակտիկա է գործում իրավական ակտեր մշակելու համար և արդյոք կիրառելի են միջազգային օրենսդրության նորմերը կամ իրավաստեղծ գործունեության ընթացքում որքանով են դրանք հաշվի առնվում:

Փաստենք, որ միջազգային փորձը հաշվի է առնվում այնքանով, որքանով այն հիմնարար բնույթ է կրում և հիրավի, միջազգային փորձը կիրառելի է այնպիսի երկրների համար, որոնք ունեն տնտեսական զարգացման հզոր տեմպեր և արդեն իսկ ձևավորված ավանդույթներ: Այս առումով, այն հարցին, թե Հայաստանի համար հատկապես որ երկրների օրենսդրությունն է ուսանելի, միանշանակ պատասխան տալ հնարավոր չէ: Այնուամենայնիվ, օրինաստեղծ գործունեության ընթացքում որպես նախադեպ հատկապես վերցվում է այն երկրների փորձը, որոնք անցել են այնպիսի սոցիալ-քաղաքական զարգացման փուլեր, որոնք բնորոշ են նաև մեր երկրին: Հիմնականում որդեգրվում է Արևմտյան Եվրոպայի և Սերձբալթյան երկրների փորձը: Սակայն, սա բնավ չի

նշանակում, որ մյուս երկրների փորձը ևս պիտանի լինել չի կարող: Համեմատական վերլուծությունը հաճախ ցույց է տալիս, որ մեր երկրում մի շարք օրենսդրական ակտեր ստեղծելիս ուղղակիորեն կրկնօրինակվում է այլ երկրների փորձը:

Այնուամենայնիվ, հատկանշական է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունն առանձնանում է իրավական ինստիտուտների բարեփոխումների առումով, և նրա փորձը պիտանի է նախկին խորհրդային պետությունների համար, որոնք այսօր բավականին լուրջ օրենսդրական խնդիրների առաջ են կանգնած: Այսպես, օրինակ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը հստակություն է մտցրել իրավական ակտերի համակարգում և որոշակի պաշար է ներառում: Վերջերս, արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մշակվեց և ընդունվեց նոր իրավական ինստիտուտ՝ իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտ, որը պարտավորեցնում է իրավական ակտերի նախագծերը մշակող մարմնին կազմակերպել նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը:

Հարկ է փաստել, որ ներկայիս փուլում վարչական իրավախստումների, քաղաքացիական և քրեական դատավարության օրենսդրության, ձեռնարկատիրական գործունեության բնագավառի օրենսդրական կարգավորման գործընթացում արդիական է որդեգրել միջազգային փորձը: Այս բնագավառում հատկապես ողջունելի է միջազգային փորձագետների պատրաստակամությունը՝ ներգրավվելու օրինաստեղծ գործունեության աշխատանքներին: Այս կապակցությամբ հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ վերջիններս ունեն մասնագիտական հմտություններ և կարող են մասնակցել օրենքների մշակման գործընթացին կամ հանդես գալ օրենսդրական բարեփոխումներ կատարելու իրենց առաջարկություններով: Ավելին, շատ դեպքերում նրանք ունեն բանակցություններ և քննարկումներ վարելու

փայլուն հմտություններ և բավականաչափ հմուտ են ձևակերպելու իրենց առաջարկությունները և առաջ բերելու հետաքրքիր գաղափարներ՝ նպաստելով նաև հասարակության իրազեկության բարձրացմանը: Հետևաբար, մեր երկրի հետ համագործակցող միջազգային փորձագետներն ունեն հարավկովկասյան տարածաշրջանի՝ քաղաքացիական հասարակության զարգացման, բիզնեսի, ֆինանսների և օրենսդրության մասին իրազեկվածություն, որոնց շնորհիվ նրանց աշխատանքները գործառնական առումով մեծ նշանակություն ունեն, և քննարկումների արդյունքում ձեռք են բերվում փոխադարձ լրացնելի մոտեցումներ, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս ներպետական օրենքը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին:

Ներկայումս, հաշվի առնելով ԵԽԽՎ՝ Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վերաբերյալ վերջին բանաձևերը, հարկ է նշել, որ երկրում ինտեգրվել է այնպիսի մոտեցում, որ ցանկացած առաջարկ կամ փաստաթուղթ կամ միջազգային փորձ պետք է հաշվի առնվի, եթե ուղղված է Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության ամրապնդմանն ու խորացմանը: Արդեն իսկ այս հանգանաճքը, որ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նշանավոր քայլեր և փոխգիծումներ արկեցին, ակնհայտորեն վկայում է, որ կառուցողական համագործակցություն է հաստատվել միջազգային հեղինակավոր կառույցների հետ, որի արդյունքում իրականացվող դատաիրավական բարեփոխումները հանգեցնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ժողովրդավարական զարգացած երկրներին բնորոշ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Ի վերջո, դատաիրավական բարեփոխումների իրանն այն սահմանադրական բարեփոխումներն են, որոնք միտված են ապահովելու մարդու իրավունքների և հիմնարար ազատու-

թյունների պաշտպանությանը վերաբերող միջազգային և ազգային չափորոշիչների կատարման բարելավմանը Հայաստանում ազգային օրենսդրության և իրավական պրակտիկայի կատարելագործման միջոցով:

Միջազգային փաստաթորթերի և ազգային օրենսդրության ուսումնասիրության հիման վրա շարադրվում է մարդու իրավունքների միջազգային-իրավական և ներպետական պաշտպանության մեխանիզմների գործունեության պրակտիկան, նշվում դրա արդյունավետության բարձրացման ուղիները: Այս պարագայում առանձնակի կարևորվում են առանձին խումբ անձանց (երեխաներ, կանայք, ազգային փոքրամասնություններ, և այլն) իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական միջոցների առանձնահատկությունները, նրանց զարգացման ուղիները ներկա պայմաններում:

Ինչ վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված միջոցառումներին, ապա Մարդու իրավունքների համար հիմնարար կառույցների կամ կոնվենցիայում բարեկված իրավունքներն ինտեգրվել են մեր երկրի ներպետական օրենսդրության մեջ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում մեծ ջանքեր են գործադրվում օրենսդրական ոլորտը բարեփոխելու ուղղությամբ, և այս առումով բավականին մեծ հաջողություններ կան: Ինքնին հասկանալի է, որ առանց լուրջ օրենսդրական փոփոխումների անհնար է երկրում իրական և կայուն բարեփոխումներ իրականացնել: Ուրախալի է, որ քննարկման առարկա են դարձել արդարադատության ոլորտում առկա և հասարակության ուշադրության ներքո գտնվող այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը: Ողջունելի է, որ այս խնդիրներն իրենց իրավական կարգավորումն են գտնում մի շաբթ օրենսդրական ակտերում՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները և մարդու

իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգային փաստաթղթերը:

Հուսով ենք, որ այս բարեփոխումների ուղղությամբ իրականացվող գործընթացը ևս մեկ առաջընթաց քայլ կլինի արդարադատության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Ուղենշված բարեփոխումները խորացնելու ուղղությամբ առաջնահերթ խնդիրներն են՝ օրենքի գերակայության ապահովումն ու ժողովրդավարական գործընթացների զարգացումը:

Հիրավի, այսօրվա հասարակական հարաբերությունների ոլոնամիկ փոփոխություննե-

րը պարտադրում են արդարադատության համակարգի բարձր ճկունություն և միջազգային արդիական պահանջներին համապատասխանելու կարողություն: Այս առումով, ամենատարբեր ոլորտներում հարաբերությունների գլոբալիզացիայի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում հնարավորինս որդեգրել և կիրառել ազգային օրենսդրության մեջ միջազգային օրենսդրության պահանջները և ընդլայնել նաև արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ծավալները:

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ (ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տնտեսական ընկերության կազմակերպա-իրավական ձևերից մեկն է: Ընկերության, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին պայմանավորված է նրանց իրավասությեկտությամբ: Իրավասությեկտությունը, որպես իրավաբանական կատեգորիա, իր հաստատուն տեղն է գտնել քաղաքացիական իրավունքում, սակայն այն կիրառելի չէ մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ: ՍՍՀՄ-ի պայմաններում իրավասությեկտությունը, որպես այդպիսին, խորապես և բազմակողմանի ուսումնասիրվել է ֆիզիկական անձանց¹ վերաբերյալ, իսկ իրավաբանական անձանց իրավասությեկտությունը հազվադեպ է դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Ընդ որում, իրավասությեկտության և դրա բովանդակության վերաբերյալ գիտնականներն ունեն տարածայնություններ: Այդ պատճառով հարկ ենք համարում մանրամասնել իրավասությեկտության կատեգորիայի հետ կապված մի քանի հասկացություններ և տերմիններ:

Գիտնականներից շատերի կարծիքով, «իրավասությեկտությունը»՝ «իրավունակությունից» և «գործունակությունից» բաղկացած ընդհանրական հասկացությունն է²:

Յա. Ռ. Վերեսի տեսակետի համաձայն՝ բազմաթիվ իրավահարաբերություննե-

րում իրավունքի սուբյեկտները կարող են օժտված լինել միայն իրավունակությամբ, եթե հնարավոր է լրացնել գործունակության բացակայությունը³: Այսպես՝ անզործունակ ճանաչված քաղաքացին փաստորեն պահպանում է իր իրավունակությունը, սակայն, գործունակությունը նրա փոխարեն իրականացնում է անզործունակի խնամակալը:

Ըստ մեզ, իրավունակության կատեգորիան իրավաբանորեն ենթադրում է այն իրավունքների շրջանակը, որոնցով կարող են օժտված լինել իրավունքի կոնկրետ սուբյեկտները, և դրա սահմանափակումը նշանակում է սուբյեկտների կողմից իրավունքների ձեռքբերման սահմանափակություն, իսկ գործունակության բացակայությունը (սահմանափակումը) առաջ է բերում սուբյեկտների կողմից իրենց սեփական գործողություններով իրավունքների և պարտականությունների ձեռքբերման և իրականացման անհնարինություն:

Իրավասությեկտություն կատեգորիան ոչ թե ընդհանրական, այլ անհատական բնույթի է: Դրա բնույթի անհատական լինելը բացարկում է նրանով, որ նախ և առաջ իրավունքի տարբեր սուբյեկտների համար դրա բաղադրիչներն (իրավունակություն, գործունակություն) ունեն տարբեր ծավալներ: Այդ առունով լիովին համաձայն ենք Մ. Վ. Կրոտովի հետ, որը գրում է. «Իրավասությեկտությունը ոչ թե որպես հավաքական է, որոնց ամբողջությամբ պետք է օժտված լինեն քաղաքացիական իրավունքի սուբյեկտ-

ները, այլ օրենքով սահմանված հատկանիշ, որով օժտվում են առանձին սուբյեկտները՝ քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու համար»⁴:

Արդի քաղաքացիական իրավունքի գիտությունը իրավասուրյեկտությունը դիտում է որպես քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցելու սուբյեկտի սոցիալական իրավական հենարավորություն: Ինչպես նշում է Վ. Ս. Եմը. «Իրավասուրյեկտությունն իր բնույթով իրավունքի ընդհանրական տեսակ է, որն ապահոված է պետության կողմից նյութական և իրավաբանական երաշխիքներով: Իրավասուրյեկտությունը պետության և սուբյեկտների միջև երկարատև կապի արդյունք է, և հենց այդ կապի առկայության ուժով, ցանկացած իրավասուրյեկտ անձի վրա դրված է այնպիսի սկզբունքային պարտականություն, ինչպիսին է օրենքների պահպանումը՝ դրանց սոցիալական նշանակությանը համապատասխան: Իրավունակությունը սուբյեկտի ունակությունն է՝ ձեռք բերելու իրավունքներ և կրելու դրանց համապատասխան պարտականություններ, իսկ գործունակությունը՝ սուբյեկտի կողմից իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանալու ու դրանք իրականացնելու ունակությունն է»⁵:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որպես իրավունքի սուբյեկտ, մասնակցում է տարբեր իրավահարաբերություններում, ուստի նրա իրավասուրյեկտությունը բազմակողմանի է: Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելով՝ ընկերությունը դառնում է քաղաքացիական, վարչական, ֆինանսական, աշխատանքային և այլ իրավահարաբերությունների մասնակից: Չնայած դրան՝ ընկերության իրավասուրյեկտությունը քաղաքացիական իրավական բնույթի է, քանի որ այն ամենից առաջ քաղաքացիական կատեգորիա է, և կազմակերպությունն էլ ստեղծվում է քաղաքացիական շրջանառության որոշակի պահանջները քավարելու նպատակով: Այս առումով լիովին համաձայն ենք Լ. Գրոսի հետ, որի կարծիքով՝

«Աշխատանքային և ֆինանսական իրավունքում իրավաբանական անձի ունեցած իրավասուրյեկտությունը բխում է քաղաքացիական իրավասուրյեկտությունից»⁶:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծումը, դրա գործունեությունն ու դադարումը կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով: Ընկերությունը վարչական, հարկային, աշխատաքային և այլ իրավահարաբերություններին մասնակցում է այնքանով, որքանով որ այն ճանաչվում է որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձ: Այլ կերպ ասած՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությունն այլ իրավահարաբերություններին ածանցյալ է նրա քաղաքացիական իրավասուրյեկտությունից:

Ինչպես նշվեց, իրավասուրյեկտությունը բաղկացած է իրավունակությունից և գործունակությունից: Սակայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, որպես իրավունքի արհեստական սուբյեկտի, և ֆիզիկական անձի իրավունակության բնույթն ու բովանդակությունը միմյանցից տարբերվում են:

Քաղաքացու իրավունակությունը, օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կրելու ունակությունն է, որը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Այսինքն՝ քաղաքացու իրավունակությունը ցանկացած քաղաքացու պատկանող և նրանից անօտարելի իրավունք՝ ձեռք բերելու օրենքով թույլատրելի որոշակի իրավունքներ և կրելու դրանց համապատասխան պարտականություններ:

Դրա հետ մեկտեղ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությունն իրավահարաբերություններին ունի որոշակի սահմաններ: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր իրավունակության ուժով կարող է մասնակցել միայն քաղաքացիական որոշակի իրավահարա-

բերություններում, քանի որ այն կարող է ունենալ միայն այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանված են օրենքով և համապատասխանում են ընկերության կանոնադրությամբ սահմանված նրա գործունեության առարկային:

Իրավաբանական անձանց հատուկ իրավունակության սկզբունքն ամրագրված է օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետով, որի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

«Իրավաբանական անձի իրավունակության հատուկ կամ, այլ կերպ ասած, նպատակային բնույթը պատմականորեն պայմանավորված է նրանով, որ կապիտալիզմի զարգացման նախնական փուլում կորպորացիաները ստեղծվում էին բույլտվության եղանակով: Բացի այդ, իրավունքների սահմանափակումը բացատրվում է իրավաբանական անձի արհեստական բնույթով»⁷:

Ֆիզիկական և իրավաբանական անձննք օբյեկտիվ իրավունքի ծնունդ են, սակայն, եթե քաղաքացուն անհրաժեշտ է ընդհանուր իրավունակություն, քանի որ նա իր միանձնյակամքով կարող է իր առջև դնել բազմատեսակ խնդիրներ և անցնել մեկից մյուսին, ապա իրավաբանական անձը ստեղծվում է մեկ կամ մի քանի անձանց կամքով, որոնք, իրավաբանական անձ ստեղծելով, իրենց առջև դնում են այս կամ այն նպատակների հասնելու որոշակի խնդիրներ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ նա իրավունակ է սուլ այն նպատակի շրջանակներում, որի համար ստեղծվել է: Ինչպես նշում է Վ. Ի. Սինայսկին. «Իրավաբանական անձը միշտ պետք է օժտված լինի հատուկ իրավունակությամբ, որպեսզի չիշխի ընդհանուր իրավունակությամբ օժտված ֆիզիկական անձանց»⁸:

Իրավաբանական անձի հատուկ իրավունակության սկզբունքը իմպերատիվ կերպով սահմանված է նաև ՀՍՍՀ 1964 թվականի Քաղաքացիական օրենսգրքի⁹ 27-րդ հոդվածով, որի համաձայն՝ իրավաբանական անձն օժտված է քաղաքացիական իրավունակությամբ՝ իր գործունեության համար սահմանված նպատակներին համապատասխան: Այդ նույն օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում էր, որ անվավեր է իրավաբանական անձի կրնքած այն գործարքը, որը հակասում է նրա կանոնադրության մեջ նշված նպատակներին:

Որպես իրավունքի սուբյեկտ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սոցիալական իրողություն է, հասարակության զարգացման անհրաժեշտ պայման: Սակայն հասարակական կյանքը և ինքը՝ իրավունքը, կամային գործունեությունից դուրս անհմաստ են: Մարդկանց խումբը միավորող նպատակը հասարակական անհրաժեշտություն է և առանձնանում է այլ նպատակներից: Օրյեկտիվորեն պայմանավորված և մարդկանց գիտակցությամբ ընդունված լինելով՝ այդ նպատակը դառնում է նրանց գործունեության որոշիչը, քանի որ դրան հասնելը պահանջում է կամային ջանքերի գործադրում: Այդ պատճառով ոչ միայն մարդկանց տվյալ խմբի կամ առանձին անհատի կամքն է որոշում իրավաբանական անձի նպատակը, այլ ինքը՝ գոյություն ունեցող նպատակն է որոշում և ուղղորդում այդ կամքի գործունեությունը:

Ուսումնասիրելով իրավաբանական անձի ընդհանուր և հատուկ իրավունակության իրավական հիմքերը՝ գիտնականներից շատերը հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ իրավունակության բովանդակությունը կազմում են ոչ թե փաստացի իրավունքներն ու պարտականությունները, այլ միայն իրավունքներ ձեռք բերելու և դրանց համապատասխան պարտականություններ կրելու սուբյեկտների հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ իրավունակությունը յուրաքանչյուր սուբյեկտի համար ընդամենը իրավունքի տիրապետման անհրաժեշտ պայման է, սուբյեկտիվ իրավուն-

թի անհրաժեշտ նախապայման: Այս առումով չի կարելի համաձայնել այն կարծիքի հետ, որի համաձայն. «Իրավաբանական անձի իրավունակությունը նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որոնք կազմակերպության կողմից օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար»¹⁰: Մինչդեռ պատկերավոր կարծիք է հայտնել Գ. Թոսունյանը, որի համաձայն. «Իրավաբանական անձի կողմից իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ կրելու նախապայմանը նրա իրավունակությունն է»¹¹:

Նույնպիսի սխալ է պարունակում նաև այն պնդումը, թե «Լիցենզիայի հիման վրա ծագող իրավաբանական անձի իրավունակությունը հատուկ չէ, այլ լրացուցիչ, քանի որ ձեռնարկատերը լրացնում է իր ընդհանուր իրավունակությունը նոր հնարավորություններով»¹²:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հատուկ իրավունակության բովանդակության հստակեցումը հնարավոր է օրենսդրի կողմից օգտագործվող տերմինների պարզաբանման միջոցով: Օրենսգիրքն օգտագործում է հետևյալ տերմինները՝ «գործունեության նպատակ», «գործունեության տեսակ» (օրենսգրքի 52 հոդված), «գործունեության առարկան և նպատակներ» (օրենսգրքի 55 հոդված):

Առևտրային կազմակերպությունների հիմնական նպատակը, օրենսգրքի 51 հոդվածի համաձայն, անվանվել է «շահույթ ստանալ»:

Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետում խոսվում է այն մասին, որ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած «տեսակներ» իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ: Դրա հետ մեկտեղ օրենսգիրքը չի մեկնաբանում «գործունեության առարկա» տերմինի բովանդակությունը:

Իրավաբանական գրականության մեջ տեսակետ կա նաև այն մասին, որ «Առևտրա-

յին իրավաբանական անձի գործունեության առարկան շահույթ հետապնդելն է»¹³: Մեր կարծիքով, նման մոտեցումը ճիշտ չէ, քանի որ շահույթը ստանալը ստեղծվող առևտրային կազմակերպությունների նպատակն է, քայլ ոչ երբեք գործունեության առարկան: Ինչ վերաբերում է գործունեության առարկային, այս դա օրենքով բույլատրվող և ընկերության կանոնադրությամբ սահմանված գործունեության այն կոնկրետ տեսակն է, որի իրականացման արդյունքում ընկերությունը հասնում է իր ստեղծման նպատակին, այսինքն՝ շահույթ ստանալուն: Այս առումով լիովին համաձայն ենք Կ. Պ. Կրյամեսկիի այն տեսակետին, որի համաձայն. «Իրավաբանական անձի գործունեության առարկա ասելով պետք է հասկանալ կանոնադրությամբ որոշակիորեն սահմանված այն գործունեության տեսակները, որոնք կազմակերպությունն իրավասու է իրականացնել»¹⁴:

Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակների իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ: Ասվածից կարելի է հետևություն անել, որ ընկերությունները կարող են ստեղծվել օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակների իրականացման համար: Սակայն, դրա հետ մեկտեղ այդ նորմի շարադրանքից հետևում է, որ գործունեության կոնկրետ տեսակի իրականացման համար ստեղծվելուց հետո առևտրային իրավաբանական անձը կարող է ունենալ միայն այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ: Այլ կերպ ասած՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որպես առևտրային իրավաբանական անձի կազմակերպահրավական ձևերից մեկը, օժտված է հատուկ իրավունակությամբ: Այսինքն՝ այն կարող է ստեղծվել օրենքով չարգելված գոր-

ծունեության ցանկացած տեսակ ծավալելու համար, սակայն, կոնկրետ գործունեության տեսակի (գործունեության առարկա) սահմանումով. այն իրավունք չունի զբաղվելու այլ տեսակի գործունեությամբ: Իսկ ինչ վերաբերում է գործունեության առարկային, ապա որոշակի տեսակի գործունեություն իրականացնելու համար այն կարող է ունենալ միայն դրան համապատասխան իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ:

Ինչպես հայտնի է, իրավասուրյեկտությունն իր մեջ ներառում է իրավունակությունն ու գործունակությունը: Ֆիկցիայի տեսության կողմնակիցները պնդում են, որ իրավաբանական անձը չի կարող օժտված լինել իրական կամքով, այսինքն՝ գործունակությամբ: Դրա հետ մեկտեղ կարծիք կա, որ «Իրավաբանական անձը, որպես իրավունքի սուբյեկտ, պետք է օժտված լինի և՝ իրավունակությամբ, և՝ գործունակությամբ»¹⁵: Ավելին, իրական սուբյեկտի տեսության կողմնակիցներից Գիրկեն գրում է, որ իրավաբանական անձը, որպես իրավունքի սուբյեկտ, պարտադիր կերպով պետք է օժտված լինի կամքով, որը հանդես է գալիս որպես նրա ներքին շարժումների յուրատեսակ զայդակ¹⁶:

Իսկապես, կազմակերպության կամքը և նպատակը միմյանց պայմանավորող և առանձին-առանձին վերցրած էական նշանակություն ունեն իրավունքի սուբյեկտի համար, քանի որ առանց կամքի հնարավոր չէ հասնել նպատակին, իսկ առանց նպատակի չի կարելի որոշել սուբյեկտի կամքի ուղղվածությունը: Ինչպես «իրավաբանական անձ» կատեգորիան, այնպես էլ «իրավաբանական անձի կամք» հասկացությունը իրավական երևույթ է: Այդ առումով անժիստելի է, որ իրավաբանական անձի գործունեությունը կարող է կազմակերպել առնվազն մեկ մարդու մասնակցությամբ: Կամքով օժտված են մարդիկ, որոնք ընդունակ են ներգործել իրավաբանական անձի գործունեության վրա: Վերջին հաշվով հենց մարդկանց կամքն է, որը դառնում է իրավաբանական անձի կամք:

Այդ կամքը որոշվում և ուղղորդվում է այն նպատակով, ինչի համար ստեղծվում է իրավաբանական անձը: Հետևաբար, լինելով իրավունքի սուբյեկտ, իրավաբանական անձն օժտված է նաև իրավասուրյեկտության բաղադրիչներից՝ գործունակությունը:

Ֆիզիկական անձի գործունակությունը, օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է: Իրավաբանական անձի գործունակության պաշտոնական հասկացությունը Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսդրությունում բացակայում է, ինչը, երեք թե, պայմանավորված է նրանով, որ իրավաբանական անձի գործունակությունն իրականացվում է նրա մարմինների միջոցով, որոնք բաղկացած են մարդկանցից: Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող է ձեռք բերել նաև իր ներկայացուցիչների կամ մասնակիցների միջոցով (օրենսգրքի 57 հոդվածի 2-րդ կետ):

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր գործունակության ուժով կարող է իր գործողություններով ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ, ինքնուրույն իրականացնել ձեռք բերված իրավունքներն ու կատարել ստանձնած պարտականությունները և պատասխանատվություն կրել քաղաքացիական իրավախախտումների համար (օրենսգրքի 60-րդ

հողված):

Գործունակությունը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սեփական գործողություններով իրավունակության իրականացման ունակությունն է:

Ի տարբերություն քաղաքացիների, որոնց գործունակությունը կախված է նրանց տարիքից, առողջական վիճակից և այլ գործուններից (օրենսգրքի 29, 30, 32 հոդվածներ), իրավաբանական անձինք, անկախ իրենց իրավունակության ծավալից, ընդհանուր կանոնի համաձայն, ունեն հավասար գործունակություն: Որոշ գիտնականների կարծիքով, իրավաբանական անձը պետք է ունենալ լրիվ գործունակություն, նրա գործունակությունը չի կարելի սահմանափակել, և իրավաբանական անձին հնարավոր չէ ճանաչել անգործունակ՝¹⁷: Իրավաբանական անձին անգործունակ ճանաչելու անհնարինության վերաբերյալ հեղինակի տեսակետը միանգամայն հիմնավոր է, քանի որ, իրենց հոգեկան վիճակի հետ կապված, անգործունակ կարող են ճանաչվել միայն քաղաքացիները: Ինչ վերաբերում է գործունակության սահմանափակմանը, ապա այս հարցի շուրջ ստորև կատարենք որոշ քննարկումներ:

Օրենսգրքի 68 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները կամ դրա համար լիազոր մարմինը նշանակում են լուծարային հանձնաժողովը: Այդ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ նշանակման պահից լուծարային հանձնաժողովին են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա նաև, որ լուծարման գործընթացում գտնվելով, փաստորեն դադարում է իրավաբանական անձի իրավունակությունը¹⁸: Մեր տեսանկյունից, ընկերության կառավարման լիազորությունների փոխանցումով նրա իրավունակությունը, թեկուզ սահմանափակ ծավալով, այնուհանդերձ պահպանվում է (օրինակ՝ սեփականության իրավունքը և

այլն): Ըստ մեզ, գործերի կառավարման լիազորությունների փոխանցումով ընկերությունը կորցնում է միայն իր գործունակությունը:

Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ և տարբեր իրավական համակարգերում այլ կերպ են դիտարկվում իրավասությեկտության, այսինքն՝ իրավունակության և գործունակության դադարման պահերը: Մասնավորապես Գերմանիայի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների իրավունակությունը և գործունակությունը կարող են ծագել տարբեր ժամկետներում: Գերմանիայում սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունները, մինչև նախնական ընկերության պետական գրանցումը, համարվում են սահմանափակ իրավունակ և գործունակ են դառնում նախնական ընկերությունների պետական գրանցումով¹⁹: Նմանատիպ կարգ է սահմանված նաև Ֆինլանդիայի քաղաքացիական օրենսդրությամբ²⁰:

Գիտնականներից մեծ մասի կարծիքով, իրավաբանական անձանց իրավունակությունը և գործունակությունը ծագում և դադարում են միաժամանակ՝²¹: Կ.Կ. Յահչկովի պնդմամբ. «Քանի որ իրավունակությունն ու գործունակությունը իրավաբանական անձի իրավասությեկտության տարրերն են, ուստի դրանց դիտարկումը ծագման կամ դադարման տարրեր պահերի առումով անհմաստ է»²²:

Օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից: Իսկապես, ընկերության իրավասությեկտությունը, այսինքն՝ առանձին-առանձին վերցրած իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից: Այլ կերպ ասած՝ կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում հենց այդ պահից, ինչն էլ խոսում է այն մասին, որ այդ պահից սկսած ընկերությունը ձեռք է բերում և իրավունակություն և գործունակություն:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից։ Շարադրանքից կարելի է հետևություն անել, որ կազմակերպության իրավասությեկտությունը, այսինքն՝ իրավունակությունն ու գործունակությունը, պետական գրանցման պահից դադարում են միաժամանակ։ Մեր կարծիքով, ընկերության լուծարման ընթացքում նրա իրավունակության և գործունակության դադարման պահերը չեն համընկնում, քանի որ մինչև լուծարման մասին պետական գրանցումը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պահպանում է իր իրավունակությունը, սակայն կորցնում է գործունակությունը։ Այսինքն՝ ընկերության գործունակությունը դադարում է դեռ այն պահից, եթե կառավարման լիազորությունները փոխանցվում են լուծարման հանձնաժողովին։

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է գալ հետևյալ եզրակացությունների։ Ընկերության իրավասությեկտությունը բաղկացած է իրավունակությունից և գործունակությունից։ Ընկերության իրավասությեկտությունն ամենից առաջ բաղաքացիական բնույթի է։ Դա բացատրվում է նրանով, որ վարչական, հարկային, աշխատանքային և այլ իրավահարաբե-

րություններին ընկերությունը կարող է մասնակցել այնքանով, որքանով որ ճանաչվում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտ։

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ գործունեության կոնկրետ տեսակ ընտրելով, այն կարող է գրաղվել միայն այդ գործունեությամբ և ունենալ միայն այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք համապատասխանում են կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված նրա գործունեության առարկային։

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր իրավունակությունն իրականացնում է իր համապատասխան մարմինների միջոցով, այսինքն՝ օժտված է նաև գործունակությամբ։ Լուծարային գործընթացում գտնվելու կապակցությամբ ընկերության գործերի կառավարման լիազորությունները փոխանցվում են լուծարման հանձնաժողովին։ Դա խոսում է նրա մասին, որ ընկերության իրավունակությունը լուծարման գործընթացում չի դադարում, սակայն դադարում է նրա գործունակությունը։ Դրանից էլ կարելի է հետևություն անել, որ ընկերության իրավունակության և գործունակության դադարման պահերը չեն համընկնում։

¹ Տե՛ս Մագազին Հ. Ի. Սубъективные права граждан СССР. Саратов, 1996, Воеводин Л. Д. Конституционные права и обязанности советских граждан. М., 1972, Веберс Я. Р. Правосубъектность граждан в советском гражданском праве. Рига, 1976.

² Տե՛ս Суханов Е. А. Гражданское право. Т.1. М., 1998, С. 114-116, Гражданское право, учебник под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. 6-е издание. Т.1. М., 2002. С. 108-114.

³ Տե՛ս Веберс Я. Р. Правосубъектность граждан в советском гражданском праве, 1976. С. 24.

⁴ Տե՛ս Кротов М. В. Правоспособность и дееспособность. Гражданское право. Учебник под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. Т.1. М., 2002. С. 112.

⁵ Տե՛ս В. С. Ем. Понятие, содержание и виды гражданских правоотношений // Гражданское право. Учебник. Т.1. Отв. Ред. Е. А. Суханов. 3-е изд. М., 2004. С. 125-126.

⁶ Տե՛ս Грось Л. Участие публично-правовых образований в отношениях собственности. Гражданско-правовые проблемы // Хозяйство и право. N 5, 2001. С. 33.

- ⁷ Տե՛ս Սուխանով Ե. Ա. Юридические лица как участники гражданских правоотношений // Гражданское право. Учебник Т.1. М., 1998. С. 189.
- ⁸ Տե՛ս Սинайский В. И. Русское гражданское право. М., 2002. С. 119-121.
- ⁹ Տե՛ս ՀԱՅԿ Քաղաքացիական օրենսդիր, 04.06.1964, N 34:
- ¹⁰ Տե՛ս Մոլьков Ю. В. Гражданская правоспособность коммерческих организаций. Правовые проблемы. М., 1996. С. 60.
- ¹¹ Տե՛ս Տօսունյան Գ. Исключительная правоспособность банка // Хозяйство и право. N 5, 1999. С. 58.
- ¹² Տե՛ս Տոտև Կ. Лицензирование по новым правилам // Хозяйство и право. N 12, 2001. С. 7.
- ¹³ Տե՛ս Ծլուգին Ա. Ա. Гражданская правосубъектность юридических лиц. М., 2001. С. 9.
- ¹⁴ Տե՛ս Կրյայևսկих Կ. Պ. Право оперативного управления и право хозяйственного ведения по российскому гражданскому праву. Дисс. канд. юрид. наук. М., 2003. С. 96-97.
- ¹⁵ Տե՛ս Շերшненович Г. Ф. Курс гражданского права. Тула, 2001. С. 125.
- ¹⁶ Տե՛ս Սуворов Н. С. Об юридических лицах по римскому праву. М., 2000. С. 98.
- ¹⁷ Տե՛ս Պլотников В. А. Неосторожность, как форма вины в гражданском праве. Дисс. канд. юрид. наук. М., 1993. С. 65.
- ¹⁸ Տե՛ս Ռухтин С. Правоспособность юридического лица. Российская юстиция. N 7, 2001. С. 26-27.
- ¹⁹ Տե՛ս Կոզлова Н. В. Создание юридических лиц. Хозяйство и право. N 1, 2002. С. 109-110.
- ²⁰ Տե՛ս Կոզлова Н. В. Правовое положения акционерных обществ и обществ с ограниченной ответственностью в Финляндии. N 10, 15, 2001. С. 68-73.
- ²¹ Տե՛ս Կոզлова Н. В. Правосубъектность юридического лица. М., Статут. 2005. С. 36.
- ²² Տե՛ս յանչկով Կ. Կ. Гражданское и торговое право капиталистических государств. М., 1996. С. 81.

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ազգային ժողովի նախագահի խորհրդական



ՏԻՐԱՊԵՏԱԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-188-րդ հոդվածները նախատեսում են անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման մի շարք հիմքեր, որոնցից, անշարժ գույքի առումով, կենտրոնական տեղ են գրադեգում ձեռքբերման վաղեմությունը և ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Որոշ դեպքերում տիրապետումը կարող է հանգեցնել սեփականության իրավունքի ծագման: Խոսքը այսպես կոչված «ձեռքբերման վաղեմության» մասին է, որի հիմնական բաղադրիչը հենց տիրապետումն է: Ձեռքբերման վաղեմությունը, որպես սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ, նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Անկախ տարրեր ժամանակաշրջաններում ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հաճախակի փոփոխություններից, այն «քոլոր ժամանակաշրջաններում ուղղված է եղել առաջին հերթին իրավունքում անհատակությունների վերացմանը»: Մասնավորապես եթե անձը նպատակ է ունեցել իրը ձեռք բերել սեփականության իրավունքով, սակայն որոշ ֆորմալ խնդիրների պատճառով չի կարողանում այն անմիջապես ձեռք բերել, ապա օրյեկտիվ իրավունքը որոշակի ժամանակից հետո լրացնում է այդ բացը: Այդպիսի նշանակություն ունի այն նաև ներկայումս: ՀՀ սահմանադրական դատարանը իր 21.11.2008 թվականի ՍԴ-667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 5-րդ կետում, ըստ Էության անդրադառնալով ձեռքբերման վաղեմության ինստիտուտը սահմանող ՀՀ քաղ. օր-ի 187-րդ հոդվածին, նշում է, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտը

նպատակ ունի իրավաբանական նշանակություն հաղորդելու գոյություն ունեցող փաստացի հարաբերություններին և նպաստելու քաղաքացիական շրջանառության կայունությանը:

Իր հերթին ՀՀ վճռաբեկ դատարանը, իր 23.05.2008թ. 3-367 (ՎԴ) թվակիր որոշման մեջ (ինչպես նաև նույնանման փաստական համագումանքներով մի շարք այլ որոշումներում, մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007թ. 3-1451, 27.03.2008թ. 3-153(ՎԴ), 31.10.2008թ.-ի ԵԿԴ/0590/02/08 թվակիր որոշումներում) հայտնելով իր իրավական դիրքորոշումը, նշում է, որ ձեռքբերման վաղեմությունը օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխսդորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Այս տեքստից բխում է, որ կարելի է առանձնացնել ձեռքբերման վաղեմության հետևյալ հատկանիշները՝

ա) բարեխսդություն. ՀՀ քաղ. օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ինստիտուտը սահմանող հոդվածում կոնկրետ չի սահմանում, թե որ դեպքում է տիրապետումը բարե-

խիղճ և որ դեպքում՝ ոչ, ինչպես նաև օրենսգրքում բացակայում է բարեխսդության ընդհանուր սահմանումը։ Դրա հետ մեկտեղ, այնուամենայնիվ, օրենսգրքի բարեխիղճ ձեռքբերմանը վերաբերող հոդվածներում հանդիպում ենք բարեխիղճ հասկացության սահմանման և, ըստ Էության, կարծես օրյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում քննարկելու բարեխիղճ ձեռքբերման և ձեռքբերման վաղեմության ինստիտուտները, պարզելու դրանց հարաբերակցության առանձնահատկությունները և այն հարցը, թե արդյո՞ք բարեխսդության տրված հասկացությունը ունի ընդհանրական բնույթ և կիրառելի է նաև ձեռքբերման վաղեմության համար, թե՞ այն նշանակություն ունի միայն կոնկրետ ինստիտուտի շրջանակներում։ Ինչպես նշում է Ա.Բ. Բարակը. «Ուշադրության է արժանի երկու տիրապետողների բարեխսդության պահանջը, մյուս հարցերում (պայմաններում) այս երկու ինստիտուտներն էապես տարբերվում են միմյանցից²»։ Համաձայնելով հեղինակի հետ՝ կարծում ենք՝ պետք է քննարկել այն հանգամանքը, թե արդյո՞ք պահանջվող բարեխսդությունը նույնարովանդակ է, թե՝ ոչ։ Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ եթե գույքը հասուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չփառեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջելու միայն այն դեպքում, եթե գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից։ Այսինքն՝ այն դեպքերում, եթե գույքը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից իր կամքով, բարեխիղճ ձեռք բերողից այն հետ պահանջվել չի կարող։ Ուշագրավ է այն փաստը, որ իրավաբանական գրականության մեջ, ըստ Էության, կարծես նույնացնելով բարեխսդության հասկացությունը, ձեռքբեր-

ման վաղեմության և բարեխսիղճ ձեռքբերման ինստիտուտների համար քննարկվում է այն հարցը, թե բավարա՞ր է միայն բարեխսդությունը տիրապետման սկզբում, թե՞ այն պետք է ուղեկցի նաև տիրապետման ողջ ժամկետի ընթացքում³։ Ընդ որում, օրենսգրքի տրամաբանությունից թերևս բխում է, որ դրանում գործում է երկրորդ մոտեցումը։ Կ. Ի. Սկլովսկին նշում է, որ բարեխիղճ ձեռքբերողի դեմ վիճուկի կացին հայց ներկայացնելը չնայած հանգեցնում է հասուցմամբ ձեռք բերված իրը վերադարձնելու մերժման, սակայն միևնույն ժամանակ փաստում է որ սեփականատերը հայցվորն է։ Հետևաբար, պատասխանողը, իրը պահելով իր մոտ, այլևս չի կարող իրեն սեփականատեր համարել⁴։ Այս առումով՝ դեռևս հոռմեական իրավաբաններից Ուլպիանը համարում էր, որ «*litis contestatio*-ից հետո բոլորը դառնում են անբարեխիղճ տիրապետողներ⁵....»։ Սակայն, արդյո՞ք դա նշանակում է բարեխսդության կորուստ։ Դ.Ի. Սեյերը այդ առումով նշում էր, որ «Եթե որիշի գույքի բարեխիղճ տիրապետողը տեղեկացված է սեփականատիրոջ կողմից իրեն ներկայացված հայցի մասին, ապա նա այդ պահից» չի կորցնում բարեխսդությունը, չնայած «պատասխանատվության առումով հայտնվում է այնպիսի դրության մեջ, որ նաև է անբարեխիղճ տիրապետողի իրավական դրությանը⁶։ Համանման դիրքորոշում ունի նաև Կ. Ի. Սկլովսկին, որը գտնում է, որ այդ դեպքում տիրապետման բարեխսդությունը շարունակում է պահպանվել⁷։ Կ. Ի. Սկլովսկիի դիրքորոշման հետ համաձայնվում է նաև Ա.Բ. Բարակը, որը կարծում է՝ «Տիրապետման ողջ ժամանակահատվածի ընթացքում բարեխսդության պահանջը թվում է չափազանց խիստ⁸։ Այսինուն, եթե տիրապետումը սկսվել է բարեխսդորեն, հետագա փոփոխությունները չեն հանգեցնում ձեռքբերման վաղեմությունից բխող իրավունքների կորստի։ Այս կապակցությամբ Վ. Մ. Խվաստովը նկատում է՝ «*Bona fides*-ի առկայությունը պահանջվում է տիրապետման ձեռքբերման պահին։ Հետագայում *bona fides*-ի կորուստը չի վնա-

սում ձեռքբերման վաղեմությանը⁹: Նման մոտեցում լիովին կիրառելի և ընդունելի է բարեխիղճ ձեռքբերման ինստիտուտի դեպքում, եթե բարեխողճության բովանդակությունը, ըստ Էռիթյան, բույլ է տալիս նման եզրահանգումներ անել: Բացի այդ, Կ.Ի. Սկլովսկին կարծում է, որ եթե առկա է վիճողիկացիայի հնարավորություն, ձեռքբերման վաղեմության ժամկետն սկսվում է վիճողիկացիոն հայց ներկայացնելու ժամկետի ավարտից հետո¹⁰:

Թվում է՝ ձեռքբերման վաղեմության դեպքում տիրապետման բարեխողճության էությունը բացահայտելու համար պետք է նկատի ունենալ մի քանի հանգամանք՝

առաջին. ի տարրերություն շատ այլ երկրների (ՌԴ, Ուկրաինա), ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերում նախատեսում է միայն անշարժ գույքի նկատմամբ: Մասնավորապես ՀՀ քաղ. օր. 178-րդ հոդվածի համաձայն՝ տիրազորկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Անշարժ գույքի իրավական ռեժիմի կարևորագույն բնութագրիներից է դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, որի կենտրոնական սկզբունքներից է իրապարակայնության սկզբունքը: Այսինքն՝ ըստ Էռիթյան, անհնար է, որ անձը հատուցմամբ ձեռք բերի անշարժ գույք դրա օտարելու իրավունք չունեցող անձից և շիմանա այդ մասին: Սակայն խնդիրն այն է, որ ձեռքբերման վաղեմության դեպքում քննարկման առարկան ամենահին էլ գույքի օտարման իրավունք չունեցող անձից դրա ձեռքբերումը չէ, այլ այն, որ անձն ինքն է սկսում տիրապետել գույքը և տիրապետման պահին նա չէր կարող չիմանալ որ այդ գույքը իրենը չէ, որ ինքը չունի այդ գույքի նկատմամբ օրինական տիտղոս: Ակնհայտ է, որ այս երկու ինստիտուտների դեպքում բարեխողճության բովանդակությունը և կիրառման ոլորտը չեն համընկնում, այսինքն՝ ընդհանուր է միայն համապատասխան պայմանի վերտառությունը՝ բարեխողճությու-

նը: Մնացած բոլոր առումներով դրանք արմատապես տարրերվում են իրարից. նախ, ինչպես արդեն նշվեց, բարեխողճ ձեռքբերման դեպքում համապատասխան գույքը հատուցմամբ ձեռք է բերվում դրա օտարման իրավունք չունեցող անձից, և ձեռքբերողը զգիտեր ու չէր էլ կարող իմանալ այդ մասին, և հենց այդ շիմացության մեջ է նրա բարեխողճությունը, մինչդեռ ձեռքբերման վաղեմության դեպքում անձն ինքն իր գործողություններով ձեռնամուխ է լինում համապատասխան անշարժ գույքը տիրապետելուն և օգտագործելուն: Բանն այն է, որ ձեռնամուխ լինելով այդ գույքը տիրապետելուն, օգտագործելուն և, ըստ Էռիթյան, իրենը դարձնելուն, անձը զիտի, որ այդ գույքն իրենը չէ, այլ պատկանում է այլ անձի, սակայն հարցի ողջ իմաստն այն է, որ այն անձը, ում իրոք պատկանում է այդ գույքը, չի առարկում անձի նման գործողությունների դեմ օբյեկտիվ (համապատասխան վայրից տևական ժամանակով բացակայությունը) կամ սուրյեկտիվ (անտարբերություն) պատճառներով: Իհարկե, նույնիսկ օբյեկտիվ պատճառը արդեն ժամանակի ընթացքում վերածվում է սուրյեկտիվի, այսինքն՝ կարծես թե ստեղծվում է մի իրավիճակ, եթե սեփականատերն իր գործողություններով նպաստում է իր գույքը այլ անձի տիրապետմանն անցնելուն: Այս եզրահանգումը բխում է այն հանրահայտ իրողությունից, որ սեփականության իրավունքը բացարձակ իրավունք է (թերևս ամենաբացարձակը բացարձակներից), և յուրաքանչյուր անձ պարտավոր է զերծ մնալ սեփականատիրոջ իրավունքի խախտումից, իր հերթին էլ սեփականատերն իրավունք ունի պահանջելու ցանկացած անձից վերացնելու իր իրավունքի խախտումները: Ամփոփելով վերոգրյալ՝ կարող ենք փաստել, որ ձեռքբերման վաղեմության դեպքում տիրապետման բարեխողճությունը ձեռք է բերում բոլորովին այլ իմաստ. մասնավորապես, կարծում ենք, որ տվյալ դեպքում պետք է սահմանել բարեխողճ տիրապետողի այլ հասկացություն հետևյալ բովանդակությամբ. «**Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրա-**

վունք ձեռք բերելիս տիրապետող համարվում է բարեխիղճ, եթե գույքը տիրապետել է սեփականատիրոց կողմից իրեն պատկանող գույքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք ցուցաբերելու հետևանքով կամ գույքի սեփականատերը որևէ առարկություն չի ներկայացրել վերջինիս կողմից գույքի տիրապետման կապակցությամբ»:

Երկրորդ. բարեխիղճ ձեռքբերման վերոնշյալ հասկացության առկայության դեպքում թերևս չի կարող կիրառելի լինել Կ.Ի. Սկրյալվակու մոտեցումն առ այն, որ եթե առկա է վիճակացիայի հնարավորություն, ձեռքբերման վաղեմության ժամկետը սկսվում է վիճակացիային հայց ներկայացնելու ժամկետի ավարտից հետո¹¹:

Նման մոտեցման պարագայում միանգամայն տրամաբանական է թվում այն հանգամանքը, որ եթե սեփականատերը որոշի ի պաշտպանություն իր սեփականության իրավունքի վիճակացիոն հայց հարուցել դատարան և պահանջել գույքը, նա դա կարող է անել օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, և գույքը նրան հետ վերադարձնելու համար, ըստ էության, նշանակություն չունի անձի կողմից այն տիրապետելու փաստը, քանի որ վիճակացիայի հիմքում են դրվում բարեխսդության և անբարեխսդության ավանդական հասկացությունները: Մյուս կողմից էլ, եթե անձը չի դիմում դատարան իր գույքը հետ պահանջելու համար, իսկ բարեխիղճ տիրապետողն էլ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում բոլոր պայմանների առկայությամբ տիրապետում է գույքը, ապա այն ժամկետը, որի ընթացքում սեփականատերը կարող էր հետ պահանջել իր գույքը և չի պահանջել, ևս պետք է համարվի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ ժամկետում: Հակառակ դեպքում ստացվում է՝ չնայած անձը որոշակի ժամանակահատված, այսինքն՝ հայցային վաղեմության ժամանակահատվածը, տիրապետել է գույքը, օրենքը դրան նշանակություն չի տալիս, անկախ այն հանգաման-

քից, որ սեփականատերն իր իրավունքից չի օգտվել:

բ) անընդմեջություն, որի տակ հասկանում ենք, որ անձը վաղեմության ժամկետի ընթացքում առանց ընդհատումների պետք է տիրապետի գույքը:

Ինչպես նշում է Ա.Բ. Բարակը՝ տիրապետողի կողմից բարեխսդության կորուստն ազդում է տիրապետման մյուս հատկանիշի անընդմեջության վրա: Եթե որևէ մեկը իրը հետ վերադարձնելու պահանջ չի ներկայացնում, ապա համարվում է, որ ձեռքբերման վաղեմությունը չի ընդհատվել¹²: Բնութագրական է, որ այն պահը, եթե գույքը տիրապետողը դադարում է բարեխիղճ լինելուց և պահը, եթե ընդհատվում է վաղեմությունը, սովորաբար համընկնում են. այսինքն՝ բարեխիղճ տիրապետումը միաժամանակ հանդիսանում է անընդմեջ¹³: Միևնույն ժամանակ, հեղինակը կարծիք է արտահայտում, որ «Չնայած օրենսգիրքը նման պահանջ չի պարունակում, սակայն վաղեմության ժամկետի ընդհատման համար բավարար չէ բարեխսդության կորուստը, այլ դրա համար անհրաժեշտ են սեփականատիրոց կամ այլ իրավագոր անձի ակտիվ գործողություններ»¹⁴: Հեղինակի այս մոտեցումը թվում է առավել ընդրւնելի, քանի որ իրոք տրամաբանական է, որ սեփականատերն իր իրավունքի խախտումը վերացնելու համար պետք է դիմի որոշակի ակտիվ քայլերի, օրինակ՝ դիմի դատարան: Այն լիովին համապատասխանում է մեր կողմից առաջարկվող բարեխսդության նոր հասկացությանը: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ տիրապետումը պետք է անընդմեջ լինի ձեռքբերման վաղեմության ողջ ժամկետի ընթացքում: Այս առումով՝ գործող օրենսդրության մեջ ևս առկա են բացեր, մասնավորապես նպատակահարմար է թվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեջ հետևյալ բովանդակությամբ նորմ ամրագրելը. «Եթե անձը մինչև ձեռքբերման վաղեմության ժամկետի ավարտը պահպանել է տիրապետումը, ապա ժամկետը համարվում է անընդմեջ: Եթե նույնիսկ իրը դուրս է եկել անձի տիր-

բապետումից, ապա ժամկետը չի ընդհատվում, եթե տվյալ անձը մեկ տարվա ընթացքում պահանջել է այդ գույքը»:Հակառակ դեպքում ներկայիս կարգավորման պարագայում ստացվում է, որ տիրապետողը յուրաքանչյուր օր պարտավոր է ապացուցել ժամկետի անընդմեջությունը:

զ) բացահայտություն. այս հատկանիշի առկայության համար բավարար է, որ սեփականատերը չքաքցնի այն, որպեսզի գույքը տեսնելու հնարավորությունը առկա լինի երրորդ անձանց մոտ¹⁵: Ծվում է՝ բացահայտ տիրապետումն առանց այն օգտագործելու հիմնականում անհնար է, ուստի անհրաժեշտ է այն նաև բացահայտ օգտագործել:

Անկասկած, բացահայտության հատկանիշը մեծապես կախված է իրի հատկանիշներից և կոնկրետ հանգամանքներից: Մասնավորապես, քանի որ ի տարբերություն ՌԴ-որենսդրության, հայրենի օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմությունը դիտվում է բացառապես անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ, ապա այդ հանգամանքն իր ազդեցությունն է ունենում այս հատկանիշի վրա: Օրինակ՝ բնակելի տան դեպքում սահմանված անհրաժեշտ ժամկետի ընթացքում ապրել այդ տանը, կատարել անհրաժեշտ վճարումները և այլն:

դ) գույքը որպես սեփական գույք տիրապետելը. այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է իրականացնի գույքի կառավարումը, ինք տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

Օրենսգրքի այս պահանջը կապված է այս ինստիտուտի այն առանձնահատկության հետ, ըստ որի՝ անձը, որը տիրապետել է որոշակի գույքի աշխատանքային, վարձակալության, անհատույց օգտագործման, հավատարմագրային կառավարման կամ պայմանագրային նմանատիպ այլ հիմունքներով, չի կարող այդ ժամանակահատվածում տվյալ գույքի

նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության հիմքով, քանի որ այդ պայմանագրերի ուժով նա գույքը տիրապետել է ոչ որպես սեփական, այլ որպես ուրիշին սեփականության իրավունքով պատկանող գույք: Սակայն հարկ է նշել, որ այս հարցի վերաբերյալ որոշ երկրների օրենսդրությունը հակառակ դիրքորոշում են ցուցաբերում, օրինակ՝ Ուկրաինան¹⁶: Այս կապակցությամբ հայտնելով իր իրավական դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 21.11.2006թ. ՍԴՈ-667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի, բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում: Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրում և օգտագործում է մասնավորապես վարձակալության, պահատվության կամ այլ պայմանագրերի հիման վրա, թեկուզ բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ՝ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք:

Հաջորդ հարցը, որին պետք է անդրադառնալ, այն է՝ արդյո՞ք ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է առաջանալ միայն տիրագուրք գույքի, թե՝ նաև այն գույքի նկատմամբ, որն ունի սեփականատերը:

ՀՀ քաղ. օր. 178-րդ հոդվածի համաձայն՝ տիրագուրք անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ է ձեռքբերման վաղեմությունը, իսկ տիրագուրք է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է սեփականության իրավունքից: Սակայն այս հարցի կապակցությամբ ՀՀ վճարեկ դատարանն իր

10.10.2007թ. 3-1451, 27.03.2008թ. 3-153(ՎԴ), 31.10.2008թ. ԵԿԴ/0590/02/08 թվակիր որոշումներում վկայակոչելով և միմյանց համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ (ձեռքբերման վաղեմություն), 172-րդ (սեփականության իրավունքի ծագման հիմքերը), 178-րդ (տիրապուրկ գույք) և 280-րդ (սեփականության իրավունքից հրաժարվելը) հոդվածները, ամրագրել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով անձի սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել այն գույքի նկատմամբ, որը տիրապուրկ է, կամ որը տիրապուրկ չէ, բայց դրա սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է գուցաբերել դրա նկատմամբ:

Այս առումով պետք է քննարկել այն հարցը, թե արդյո՞ք կարող է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք առաջանալ պետությանը կամ համայնքին պատկանող անշարժ գույքի նկատմամբ: ՀՀ Քաղ. օր. 187-րդ հոդվածի ձևակերպումը հիմք է տալիս եզրակացնելու, որ ձեռքբերման վաղեմությունը կարող է հանդիսանալ ցանկացած, այդ բվում նաև պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման հիմք¹⁷: Այս մոտեցումը բվում է արդարացված և լիովին համապատասխանում է այս հարցում վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը, ինչպես նաև բարեխղճության այն սահմանմանը, որը, մեր կարծիքով, առավել է համապատասխանում այս ինստիտուտի էությանը:

Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում տիրապուրկ գույքը պետության կամ համայնքային սեփականություն դարձնելու հնարավորություն: Մասնավորապես ՀՀ քաղ. օր. 187-րդ հոդվածը նշում է. «Եթե քաղաքացին կամ իրավաբանական անձը տասը տարփա ընթացքում....»: Այսինքն՝ պետությունը կամ համայնքը ՀՀ քաղ. օր. նշված հոդվածի ուժով չի կարող անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք: Ինչպես արդարացիորեն նշում է Տ.Կ. Բարսեղյանը. «Նման բացքողումը արդարացված չէ այն պատճառով, որ անշարժ գույքը, եթե հո-

դատարածք չէ, ապա անպայմանորեն կապված է հոդամասի հետ: Հետևաբար, եթե չկաքաղաքացի կամ իրավաբանական անձ, որը տիրապետում է այդ հոդատարածքը, այն կարող է մնալ տիրապուրկ, անօգտագործելի այդտեղից բխող բոլոր հետևանքներով¹⁸»: Կարծում ենք՝ անհրաժեշտ է նախատեսել տիրապուրկ անշարժ գույքը պետական կամ համայնքային սեփականություն դարձնելու հարցը:

Այս հարցի հետ սերտորեն առնչվում է տիրապուրկ գույքի հաշվառման խնդիրը: Տիրապուրկ անշարժ գույքի հաշվառման խնդիրը մեր հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կառավարության՝ «Հնարնակամ կառուցված շենքերը, շինությունները, ինքնակամ գրադեցված հոդամասերը, տիրապուրկ (լրված) անշարժ գույքը հաշվառելու մասին» վերտառությամբ 2000 թվականի հուլիսի 27-ի թիվ 422 որոշմամբ, որի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառման ենթակա է նաև տիրապուրկ (լրված), սեփականատեր չունեցող կամ այն անշարժ գույքը, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն կարգի 3-րդ մասի 19-րդ կետը, մանրամասներով հաշվառման մեխանիզմը, ամրագրում է, որ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժնումը տիրապուրկ (լրված) անշարժ գույքի մասին տեղեկատվության առկայության դեպքում այն հաշվառման համապատասխան մատյանում գրանցելուց հետո 5-օրյա ժամկետում հայտնում է տվյալ տարածքի համայնքի դեկավարին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) և մարզպետին (համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի վրա կառուցված շենքերի, շինությունների մասով):

Հայրենի օրենսդրության մեջ տիրապուրկ անշարժ գույքին վերաբերող առկա կարգավորումներն, ըստ Էության, ավարտվում են այսքանով՝ չնախատելով հետագայում որպես այդպիսին հաշվառված գույքը պետական

կամ համայնքային սեփականություն դարձնելու հնարավորություն: Սա բնական է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրը չի տալիս նման հնարավորություն: Այս առումով՝ բավական հետաքրքրական մոտեցում է ցուցաբերել ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը, որի 225-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «տիրագուրկ անշարժ գույքը հաշվառվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից այն տեղական ինքնակառավարման մարմնի հայտարարության հիման վրա, որի տարածքում գտնվում է համապատասխան անշարժ գույքը: Հաշվառման օրվանից մեկ տարի հետո համայնքային սեփականության կառավարման լիազորություն ունեցող մարմնն իրավունք ունի դիմելու դատարան՝ տվյալ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի ճանաչման պահանջով»: Ընդ որում, եթե դատարանը չի ճանաչում համայնքի սեփականությունը այդ գույքի նկատմամբ, այն կարող է վերադարձվել նախկին սեփականատիրոջը կամ ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Ակնհայտ է, որ ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի առաջացման հստակ մեխանիզմ:

Ամփոփելով վերոգրյալ՝ կարծում ենք՝

ՀՀ քաղ. օր. 178-րդ հոդվածը անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Տիրագուրկ անշարժ գույքի սահմանված կարգով հաշվառման օրվանից մեկ տարի հետո, եթե որևէ քաղաքացի կամ իրավաբանական անձ այդ գույքը չի տիրապետում, ապա այն համայնքի դեկավարը, որի տարածքում գտնվում է համապատասխան անշարժ գույքը, իրավունք ունի դիմել դատարան՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջով: Այդ պահանջի մերժման դեպքում գույքը կարող է հետ վերադարձվել նախկին սեփականատիրոջը, եթե վերջինս հայտնվի, կամ ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով»:

ՀՀ քաղ. օր. սահմանում է, որ տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:

Մինչև ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը, գույքը, որպես սեփականություն տիրապետող անձն իրավունք ունի պաշտպանելու այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատերը չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ չունեն տիրապետման իրավունք:

¹ Տե՛ս Բաբաև Ա.Բ. Система вещных прав. Монография. М.: Волтерс Клювер, 2006. С. 218.

² Տե՛ս Բաբաև Ա.Բ. Система вещных прав. Монография. М.: Волтерс Клювер, 2006. С. 228.

³ Տե՛ս Բաբաев Ա.Բ. Система вещных прав. Монография. М.: Волтерс Клювер, 2006, կամ Скловский К.И. Собственность в гражданском праве. М.: Дело, 2002. և այլն:

⁴ Տե՛ս Скловский К.И. Собственность в гражданском праве. М.: Дело, 2002. С. 262.

⁵ Տե՛ս Դигесты Юстиниана / В пер. И.С. Перетерского. ХХ.1.16. М., 1984. С. 122.

⁶ Տե՛ս Մեյեր Դ.И. Русское гражданское право. Ч.1. С. 268.

⁷ Տե՛ս Скловский К.И. Собственность в гражданском праве. М.: Дело, 2002. С. 262.

⁸ Տե՛ս Բաբաев Ա.Բ. Система вещных прав. Монография. М.: Волтерс Клювер, 2006. С. 219.

⁹ Տե՛ս Խոստով Վ.Մ. Система римского права. С. 122.

¹⁰ Տե՛ս Սկլովսկի Կ.Ի. Собственность в гражданском праве. М.: Дело, 2002. С. 263. Այս մոտեցման վիճելիության մասին կխոսվի ստորև:

¹¹ Տե՛ս Սկլովский К.И. Собственность в гражданском праве. М.: Дело, 2002. С. 263.

¹² Տե՛ս Բաբայ Ա.Բ. Система вещных прав. Монография. М.: Волтерс Клювер, 2006. С. 219.

¹³ Վերոշարադրյալը ցույց տվեց, որ ձեռքբերման վաղեմության դեպքում բարեխմնությունը ունի այլ բովանդակություն, և դրա կորուստը հնարավոր է միայն այն դեպքում, եթե սեփականատերը օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում պահանջում է վերացնել իր իրավունքի խախտումը և իրեն վերադարձնել իր գույքը: Նման պարագայում անընդմեջությունը ենթադրում է, որ համապատասխան ժամկետի ընթացքում գույքը գտնվում է տիրապետողի փաստացի իշխանության ներքո, և դրա պահպանման համար կատարում է անհրաժեշտ բոլոր գործողությունները:

¹⁴ Տե՛ս Բաբայ Ա.Բ. նույն տեղում:

¹⁵ Տե՛ս Гражданское право. Учебник. Часть 1. Под ред. А.П. Сергеева и Ю.К. Толстого. М., 1997. С. 344.

¹⁶ Ուկրաինայի քաղ. օր.-ի 344-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անձը, որը բարեխմնորեն ձեռք է բերել **ուրիշի** գույքը և շարունակում է բացահայտ և անընդմեջ տիրապետել անշարժ գույքը 10, իսկ շարժական գույքը՝ 5 տարվա ընթացքում, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն), եթե այլ բան նախատեսված չէ այս օրենսգրքով: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. եթե անձը գույքը սկսել է տիրապետել գույքի սեփականատիրոց հետ կմքած պայմանագրի հիման վրա, և պայմանագրի ժամկետի ավարտից հետո գույքի սեփականատերն այն վերադարձնելու պահանջ չի ներկայացրել, ապա անձն այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով՝ անշարժ գույքի դեպքում հայցային վաղեմության ժամկետի ավարտից 15, իսկ շարժականի դեպքում՝ 5 տարի անց:

¹⁷ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (Երրորդ իրատարակություն).-Երևանի պետ. համալս., 2006, էջ 294:

¹⁸ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. նշվ. աշխ., էջ 294:

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու



ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՀ ԵՐԿՐՄԵՐՈՒՄ

Մեր կողմից իրականացրած ուսումնասիրությունը բոլոր է տվել վեր հանել վարչական արդարադատության ինստիտուտի կայացման այն արժեքավոր փորձը, որը կուտակվել է ԱՊՀ որոշ երկրներում:

Վարչական իրավունքի մասնագետների կողմից առանձնացվում են վարչական արդարադատության իրավական ինստիտուտի բացահայտման երեք ասպեկտներ՝ նյութական, որն առնչվում է վեճի քննությի հետ, կազմակերպական, որը պայմանավորված է վեճերի քննությունների իրականացնող հասուն մարմինների առկայությամբ և ձևական, որը համապատասխանում է վեճերի քննության վարույթային կարգին:

Վարչական արդարադատության գործողությունը տարածվում է այն հասարակական հարաբերությունների վրա, որոնք առաջանում են պետական կառավարման ոլորտում ծագող այնպիսի վեճերի լուծման ժամանակ, որտեղ կողմերից մեկը պարտադիր կարգով պետք է լինի պետական իշխանության մարմինը: Վարչական արդարադատության խնդիրները լիովին համապատասխանում են արդարադատության ընդհանուր խնդիրներին, այն է՝ իրավունքի վեճերի քննությունը և լուծումը, քաղաքացիների և կազմակերպությունների սուրյեկտիվ իրավունքների ու ազատությունների վերականգնումը և օրինականության ամրապնդումը: Վարչական արդարադատության, որպես արդարադատության ինքնուրույն ճյուղի անմիջական օբյեկտ, պետական կառավար-

ման բնագավառում ծագող հանրային իրավական վեճերի լուծումն է¹:

Գոյություն ունեն վեճային իրավահարաբերությունների երկու տեսակ՝

1. ծագում են քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից կատարված իրավախախտումների արդյունքում,

2. առաջանում են, երբ խախտումները բխում են պաշտոնատար անձի (գործադիր իշխանության մարմնի) հակաօրինական գործողություններից կամ անգործությունից:

Այն դեպքերում, երբ անձը (քաղաքացի, իրավաբանական անձ) կատարել է իրավախախտում, պետությունն առանց որևէ մեկի բողոքի՝ սեփական նախաձեռնությամբ, պայքարում է դրա դեմ, քանի որ դա նրա պարտականությունն է: Դա ուղղահայաց, իշխանական քննությի, իշխանության ենթակայության հարաբերություններ են: Այս դեպքում վեճի աղբյուրն իրավական նորմերի խախտումն է, որի համար անձը ենթարկվում է պատասխանատվության: Վարչական պատասխանատվության փաստացի հիմքը վարչական տուժամիջոցներով (սանկցիաներով) պահպանվող իրավական նորմի խախտումն է (վարչական զանցանք)²:

ԱՊՀ երկրներում վարչական արդարադատությունն ընդգրկում է վերը նշված հանրային վեճերի տեսակները: Կազմակերպական առումով այդ վեճերը քննում են ինչպես մինչդատական մարմինները, այնպես էլ՝ դատարանները:

Քննարկվող բնագավառի օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, դեռևս մեծ տեղ է գրավում վարչական վեճերի մինչդատական քննությունը, սակայն հետզհետեւ մեծանում է դատարանների կողմից վարչական արդարադատության իրականացման տեսակարար կշիռը:

Հետխորհրդային երկրներում խնդիր է ծագում, թե ինչպիսի⁶ կազմակերպահրավական ձևերում առավել արդյունավետ կարող է գործել այդ ինստիտուտը հանրային վարչակազմի որոշումների ու գործողությունների օրինականության նկատմամբ, դատական վերահսկողության ո՞ր լիազորությունները պետք է ստանան օրենսդրական ամրագրում։ Հետևաբար, առաջանում է համապատասխան դատարանների դատավարական գործունեության կարգավորման խնդիր։

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հատուկ դատարանների ստեղծումը պայմանավորված է ոչ միայն այս կամ այն բնույթի վարչական գործերն առավել մասնագիտացված ընթացակարգերով լուծելու միտումով, այլև՝ այն կարևոր պատճառարանությամբ, որ վարչական արդարադատության ինստիտուտը, տեսական առումով, դեռևս ունի խիստ սահմանափակ ընկալում³։

Հետխորհրդային երկրներում տարբեր է այն գործերի շրջանակը, որոնք պատկանում են վարչական դատարանների ընդդատությանը. դրանք պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների (անգործության) վիճարկման, ինչպես նաև ընտրությունների, հարկային օրենսդրության, պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծագած վեճերն ու հասարակական կազմակերպությունների գործունեությունը դադարեցնելու կամ կասեցնելու մասին գործերն են։

Ինչպես ցույց է տալիս հետխորհրդային երկրներում վարչական արդարադատության

կայացման պրակտիկան, գործադիր իշխանության նկատմամբ դատական վերահսկողության ձևակորման գործընթացի բարդությունները հիմնականում պայմանավորված են եղել մի կողմից իշխանությունների տարածատման սկզբունքն առանց վերապահումների ընդունելու միտումով, ինչը եղել է այդ սկզբունքի տակ մակերեսային, դեռևս անհրաժեշտ գործնական փորցի վրա չձևավորված պատկերացումների հետևանք, մյուս կողմից՝ ժողովրդավարական ընդհանուր կառույցների ոչ բավարար կազմավորմամբ և որոշ ավանդույթների բացակայությամբ⁴։

Մի շարք հետխորհրդային երկրներում վարչական արդարադատություն են իրականացնում նաև սահմանադրական դատարաններ՝ խորհրդարանական և նախագահական ընտրությունների արդյունքների առնչությամբ առաջացած վեճերով։ Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեների, ինչպես նաև Հանրապետության Նախագահի, ԱԺ պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ վեճերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրը համապատասխանաբար սահմանադրական դատարանին ու Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին լիազորություններ են վերապահում, որոնք միմյանցից տարածատվում են առարկայական իրավասության տեսանկյունից, սակայն, ըստ էության, գործադրվում են միևնույն գործառույթի՝ հանրահավաքների և ընտրությունների վավերականություննը վերահսկելու ընթացակարգի շրջանակներում⁵։

ՀՀ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատությանը զուգընթաց իրականացնում է նաև վարչական արդարադատություն։ ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ա) հիմնական լիազորությունները և բ) ածանցյալ լիազորություններ։

Հիմնական լիազորությունների շարքին կարելի է դասել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշումը, սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանումը, լիազորությունների հարցով իշխանության տարրեր մարմնների միջև ծագած վեճերի լուծումը, մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

Ածանցյալ լիազորությունների թվին են դասվում ընտրությունների նկատմամբ վերահսկողությունը, տարրեր հարցերի առնչությամբ եզրակացություններ տալը, կուսակցությունների գործունեության վերաբերյալ հարցերի քննությունը և այլն⁶:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, լուծելով հանրաքվեի արդյունքների, Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելով կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին, ըստ Էության իրականացնում է վարչական արդարադատություն:

Սահմանադրական դատարանին վարչական արդարադատության գործառույթի վերապահումը թեև ունի որոշ դրական կողմեր, այն առումով, որ վերը թվարկած կարևոր սահմանադրափական բնույթ ունեցող վեճերը լուծելու իրավունքը տրված է դատական իշխանության համակարգում առանձնահատուկ տեղ գրադեցնող ՀՀ սահմանադրական դատարանին: Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ դրանք ընդամենը նրա ածանցյալ լիազորություններն են: Չպետք է նաև անտեսել այն գործուները, որոնք վկայում են վարչական արդարադատության կազմակերպման նշված մոդելի աննպատակահարմարության մասին: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին վարչական արդարադատության գործառույթի վերապահումը ոչ միայն չի նպաստում վարչական արդարադատության ինստիտուտի կայացմանը, այլև անհարի է սահմանադ-

րական դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կարգավիճակին: Բացի դրանից, այն կարող է վտանգի տակ դնել նաև սահմանադրական արդարադատության արդյունավետությունը: Բանն այն է, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումներից հետո ընդլայնվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու իրավունքը ունեցող սուբյեկտների թիվը, ինչն անխուսափելիորեն բարձրացրել է նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ծանրաբեռնվածությունը: Նման պայմաններում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին նաև վարչական արդարադատության իրականացման գործառույթի տրամադրումը, կարծում ենք, բացասաբար կազդի սահմանադրական արդարադատության իրականացման արդյունավետության վրա:

Հանրային վեճերի լուծման մինչդատական քննության կարգ է սահմանված ընդիանապես հետխորհրդային բոլոր երկրներում: Օրինակ՝ նման քննության կարգ է սահմանված «Վարչարարության իիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի, «Վարչական վարույթի մասին» Աղբեջանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 21-ի օրենքներով և Վրաստանի Հանրապետության 1999 թվականի հունսի 23-ի «Վրաստանի վարչական դատավարության մասին» օրենսգրքով: Նշված իրավական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս վերհանել հանրային վեճերի լուծման մինչդատական եղանակի ընդիանուր գծերն անդրկովկասյան պետություններում:

2004 թվականի փետրվարի 18-ի «Վարչարարության իիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկել վարչական ակտերը, վարչական մարմնի գործո-

դուրս կամ անգործությունը: Դրանք կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել՝ ա) ակտն ընդունած վարչական մարմին, բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին:

Վարչական պատասխանատվության վարույթը հիմնականում ներառում է քաղաքացու կամ իրավաբանական անձի իրավախսախտումների հետ կապված վեճային իրավահրաբերությունները: Վերջինս բնութագրվում է հարկադրանքի միջոցների այնպիսի համակարգով, որը կարգավորվում է վարչական իրավունքի նորմերով: Այն քաղացած է հետևյալ մասերից՝ վարչական իրավախսախտումների վերաբերյալ գործերով, վարչական խափանող կամ վերականգնման միջոցների կիրառման, վարչական իրավունքի հիման վրա իրականացվող կարգապահական հարկադրական միջոցների կիրառման վարույթներ: Վարչական իրավախսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 246-րդ հոդվածի համաձայն՝ վարույթի կարգը որոշվում է Վարչական իրավախսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով, ՀՀ կառավարության որոշումներով: Այսպիսով օրենսգրքում ընդգրկված չեն գերատեսչական ակտերը: Սակայն գործնականում վարույթի առանձին տարրերին առնչվող հարաբերություններ կարգավորվում են նաև գերատեսչական ակտերում, ինչը հակասում է նշված օրենսգրքի պահանջներին:

Դատարանները վարչական հանրային վեճերը քննում են կամ հատուկ վարչական դատավարական օրենսգրքերով նախատեսված նորմերով կամ քաղաքացիական դատավարության հատուկ նորմերով:

2007 թվականի նոյեմբերի 28-ի «Վարչական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքը սահմանում է վարչական դատարանում և վրձնաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգոր-

ծության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցերի քննության կարգը: Դա պայմանավորված է վարչական դատարանների համակարգի կառուցվածքով: Վարչական դատարանն ըստ էության քննում է բոլոր վարչական գործերը: Վարչական դատարանի վճիռները կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով: ՀՀ վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է «Վարչական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով, իսկ «Վարչական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով», այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում օրենսգրքին և վարչական դատավարության էությանը: Այլ օրենքներում պարունակվող վարչական դատավարական նորմերը պետք է համապատասխանեն օրենսգրքին:

Հետխորհրդային երկրներում բարեփոխումներն իրականացվել են հետևյալ ընդհանուր նպատակներին հասնելու համար: Առաջին հերթին պետք է ապահովվեր օրենքի շրջանակներում վարչական կառավարման իրականացումը, այն դարձնել ավելի ենթահաշվետու, վերահսկելի, վարչարարությունների առնչությամբ քաղաքացիներին իրավունքներ վերապահել և միջոցներ տրամադրել այդ իրավունքներն արդյունավետ կիրառելու համար: Ընդհանուր միտումն այն է, որպեսզի անհարկի ընդլայնվի դատական հակողություն նախաձեռնելու լիազորությամբ օժտված անձանց շրջանակը և այն հիմքերը, որոնցով պայմանաշնորհված է վարչական արդարադատության ինստիտուտը:

Այդ ընդհանուր նպատակներին հասնելու միջոցներն իրար շատ նման են: Այն ներա-

ուում է վարչական ընթացակարգերի մասին օրենսգրքերի կամ օրենքների ընդունումը, որոնք մանրամասնում են թե ինչպես պետք է իրականացվեն վարչական գործողությունները: Այդ օրենսգրքերը բազմակողմ չեն, այլ ընդգրկում են անհատական որոշումների ընդունման ու գործողությունների իրականացման կարգը: Նորմատիվ ակտերի ընդունման կարգը դրանք չեն ընդգրկում: Ի լրացումն անհատական որոշումների ու գործողությունների ընդունման ընթացակարգերի ստեղծման, օրենսգրքերը սովորաբար պարունակում են շահագրգիռ կողմերին ծանուցելու, համապատասխան իիմնարկներին գործի վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու, կողմերի մասնակցության, վկաների հարցաքննության, իիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ դրույթներ:

Վարչական ընթացակարգերի մասին օրենսգրքերը սովորաբար պարունակում են իշխանության սկզբնական մարմնի որոշումներից ու գործողություններից տուժած կողմերի՝ վերադաս վարչական մարմին բողոքարկելու հնարավորությունը: Ներքին բողոքարկումները, որոնք հնարավորություն են ընձեռնում վե-

րանայել որոշումների և գործողությունների փաստն ու էությունը, լրացվում են օրինականության հարցերով դատարան դիմելու մասին դրույթներով:

Այսպիսով, ելնելով վարչական արդարադատության նյութական, կազմակերպական, ձևական ասպեկտներից, հետխորհրդային երկրներում՝

1. վարչական արդարադատության առարկա են հանդիսանում բոլոր տեսակի հանրային վեճերը, այդ թվում նաև վարչական գանցանքները,

2. վարչական արդարադատությունն իրականացվում է թե՛ մինչդատական, թե՛ դատական մարմինների կողմից,

3. վարչական արդարադատության իրականացման համար առկա է ինչպես մինչդատական վարույթ, այնպես էլ՝ վարչական դատավարական կարգ,

4. սահմանադրական դատարանը պետք է զերծ մնա վարչական արդարադատության իրականացումից:

-
1. Зеленцов А.Б. Административный спор. Правосудие. N 1, 2000. С. 70.
 2. Бахрах Д.Н., Россинский Б. В., Старилов Ю.Н. Административное право: Учебник для вузов. 2-е издание. М., Норма, 2005. С. 775.
 3. Դանիելյան Գ. Վարչական արդարադատության հիմնախնդիրները, Երևան «ԱՊ-Տ», 2004, էջ 81:
 4. Դանիելյան Գ. նույն աշխատանքը, էջ 92:
 5. Հարությունյան Գ. Սահմանադրական վերահսկողություն, Երևան, Նժար, 2002, էջ 141-142:
 6. ՀՀ Սահմանադրական իրավունք, դասագիրք, Երևան, 2008, էջ 678:

ՍԱՅԱԴ ԲԱԴԱԼՅԱՆ

ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող



ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում վարչական մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ու ենթաօրենսդրական տասնյակ ակտերը շատ դեպքերում հակասում են միջյանց և պատշաճ երաշխիքներ չեն ապահովում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար վարչական մարմինների հետ հարաբերություններում: Ստեղծված իրավիճակից ելքն անհնար էր առանց վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող մեկ միասնական, համակարգված իրավական ակտ ունենալու¹: Այդ խնդրի լուծմանն էր ուղղված 2004թ. փետրվարի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որն ուժի մեջ մտավ 2004թ. դեկտեմբերի 31-ին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունման գլխավոր նպատակներից մեկն է մեկ միասնական ակտի միջոցով կանոնակարգել վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները, սահմանել այն հիմնական չափանիշները, սկզբունքները և ընդհանուր պահանջները, որոնցով պետք է դեկավարվեն վարչական մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև՝ որոնց հիման վրա պետք է ընդունվեն և կիրառվեն առանձին տեսակի վարչական վարույթների վերաբերյալ ընդունվող իրավական ակտերը՝ վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունների առանձին

ոլորտների առաձնահատկությունների հաշվառմամբ: Եթե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված առանձին տեսակի վարչական վարույթների կարգավորմանն ուղղված ՀՀ օրենքները հիմնականում համապատասխանում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին², ապա նույնը չի կարելի ասել մինչև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված ՀՀ օրենքների վերաբերյալ, որոնք կարգավորում են վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2000թ. մայիսի 17-ին:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուրյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պա-

հանջներին: Հանրային իրավունքի բնագավառում իրականացվող այս գործունեության պատշաճ իրավական կարգավորումից է մեծապես կախված այս ոլորտում վարչարարության իրականացման արդյունավետությունը, անձանց իրավունքների իրականացման ապահովումը, և միայն այդ դեպքում հնարավոր կլինի իրավես հասնել ստուգման նպատակների իրականացմանը, որոնք են՝ տըստեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ իրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսվարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, ստուգումների իրականացման ընթացքում նշված օրենքի կիրառելիության հարցը միանշանակ չէր ընդունվում իրավակիրառական պրակտիկայում: Ըստ հաճախ, հատկապես ստուգումն իրականացնող մարմինների ներկայացուցիչների կողմից հնչեցվում էր կարծիք, որ ստուգումներն ամբողջովին իրավական կարգավորման են ենթարկվում միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը այստեղ կիրառելի չէ: Նման պարագայում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ստուգումների իրավական կարգավորման բնագավառում այս երկու օրենքների հարաբերակցության հարցը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Այս

հոդվածից բխում է, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են այս ոլորտում վարչական վարույթի առանձնահատկությունները, իսկ բոլոր այն դեպքերում, երբ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ այլ կարգավորում, պետք է կիրառվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Այդ մասին է նշել նաև ՀՀ վրձնաբեկ դատարանը 06.07.2007թ. թիվ 3-918(ՎԴ) քաղ. գործով կայացված որոշմամբ³: Վերոհիշյալ որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է ստուգումների իրականացման բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատուկ կարգավորման բացակայության պայմաններում գործում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման պատշաճ իրավական կարգավորման տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե ստուգումների ընթացքում վարչական վարույթը երբ է համարվում հարուցված: Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է վարչական վարույթի հարուցման երկու հիմք՝ անձի դիմումը (բողոքը) և վարչական մարմնի նախաձեռնությունը: Ստուգումը, որպես կանոն, իրականացվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում

է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը: «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր: Առաջին հայացքից կարող է քվալ, որ ինչու «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածով նախատեսված հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ էլ վարչական վարույթը համարվում է հարուցված, սակայն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքների առավել մանրակրկիտ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ վարչական վարույթ չի հարուցվում: Այսպես՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ստուգման արդյունքներով կազմվում է ակտ երկու օրինակից, եթե տնտեսվարող սուբյեկտն ունի պետական բաժնեմաս՝ երեք օրինակից, խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք: Այսպիսով, ստուգման արդյունքներով կարող է կազմվել երկու տեսակի փաստաթուղթ: Խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտ, խախտումներ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք: Պատասխաննելու համար այն հարցին, թե ստուգումը, որպես վարչական վարույթ, երբ է համարվում հարուցված, անհրաժեշտ է պարզել ստուգման արդյունքում կազմվող այս երկու փաստաթուղթերի իրավական բնույթը, մասնավորապես՝ արդյո՞ք վերջիններս հանդիսանում են վարչական ակտ, քանի որ, ինչպես նշվեց վերևում, վարչա-

կան վարույթը վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունմանն ուղղված գործունեությունն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Այստեղից հետևում է, որ ստուգման արդյունքներով կազմվող ակտը միանշանակորեն հանդիսանում է վարչական ակտ, քանի որ համապատասխանում է վարչական ակտի չափանիշներին, այն է՝ ունի արտաքին ներգործություն, հանրային իրավունքի բնագավառում հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ և, որն ամենակարևորն է, ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Ինչ վերաբերում է ստուգման արդյունքներով կազմվող տեղեկանքին, ապա ակնհայտ է, որ այն չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ չունի վարչական ակտի վերոհիշյալ հատկանիշները, մասնավորապես՝ անձանց համար չի սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում իրավունքներ կամ պարտականություններ: Տեղեկանքը հանդիսանում է ընդամենը տեղեկատվական բնույթի փաստաթուղթ⁴:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարի կողմից ստուգումն իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ վարչական վարույթ չի հարուցվում այն պահճառաբանությամբ, որ այդ պահին ստուգում իրականացնող մարմնի գործողությունները չեն կարող նպատակամղված լինել վարչական ակտի ընդունմանը, քանի որ հայտնի չեն, թե

արդյոք կհայտնաբերվի որևէ խախտում, և կընդունվի արդյոք վարչական ակտ: Հնարավոր է, որ խախտում չհայտնաբերվի և կազմվի տեղեկանք, որը, ինչպես նշվեց վերևում, չի հանդիսանում վարչական ակտ: Փաստորեն, նման պարագայում ստուգումն ուղղված չէ վարչական ակտի ընդունմանը և, հետևաբար, վարչական վարույթ այս դեպքում չի հարուցվում, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամնված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Ստուգումների կազմակերպման և անցկացման շրջանակներում վարչական վարույթ կարող է հարուցվել միայն խախտումներ հայտնաբերվելու դեպքում և այս դեպքում վարչական վարույթը հարուցվում է ստուգման արդյունքներով ակտի կազմմամբ, քանի որ ստուգումն իրականացնող մարմնի առաջին գործողությունը, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը, դա ակտի կազմումն է: Ընդորում, այդ ակտն էլ հենց հանդիսանում է վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթի հարուցումը և վարչական ակտի ընդունումը կատարվում է միաժամանակ, այնինչ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված են որոշակի և հստակ ընթացակարգեր վարույթի հարուցումից մինչև վարչական ակտի ընդունումն ընկած ժամանակահատվածում, մասնավորապես, վարչական վարույթը պետք է բաղկացած լինի միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Մինչդեռ, ստուգման ակտով հարուցելով վարչական վարույթը և միաժամանակ ստուգման ակտով էլ եզրափակելով այն, վարչական վարույթի ընթացիկ փուլ չի իրականացվում, ինչի հետևանքով վարչական վարույթի մասնակիցները զրկվում են վարչական վարույթի՝ այդ փուլում օրենքով իրենց վերապահված իրավունքներն

իրականացնելու հնարավորությունից: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաշառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանրանալու վարչական վարույթի նյութերին, վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեներ, լուսապատճեներ, քաղվածքներ, վարչական մարմինը պարտավոր է անձանց համար պայմաններ ստեղծել իր ընդունած նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև այդ մարմնի գործունեությանն առնչվող օրենքներին և իրավական այլ ակտերին ծանրանալու համար: Վարչական վարույթի ընթացիկ փուլի բացակայության պայմաններում վարչական վարույթի մասնակիցները, փաստորեն, զրկվում են օրենքով իրենց վերապահված վերոհիշյալ և մի շարք այլ իրավունքներն իրականացնելու հնարավորությունից, ինչը կարող է հանգեցնել չիմնավորված և անօրինական վարչական ակտի ընդունմանը, քանի որ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օրյեկտիվ քննարկում տեղի չի ունենում:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ վերոգրյալ հիմնախնդրի ևս մեկ մասնավոր դրսերման: Այսպես՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ է օժտված նաև ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը (ներկայիս՝ ՀՀ ԿԱ պետական եկա-

մուտների կոմիտե): «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հարկային վարչարարության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոն (այսուհետ՝ ֆոնդ): Ֆոնդը, ի թիվս այլ աղբյուրների, կազմավորվում է նաև հարկային մարմնների կողմից Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարները, հարկովով շրջանառությունները և եկամուտները թաքցնելով կամ պակաս ցույց տալը բացահայտելու հետևանքով պետական բյուջե լրացուցիչ գանձվող հարկերից, տուրքերից, պարտադիր այլ վճարներից և դրանց հետ կապված հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական պատժամիջոցներից, ինչպես նաև հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ նախատեսված տուգանքներից տասը տոկոս մասհանումների հաշվին: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ֆոնդին տրամադրվում է նաև լրացուցիչ գումարներ անմիջապես հայտնարերողների դրամական պարզեցուման և օգնության համար: Այստեղից բխում է, որ հարկային մարմննի՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք յուրաքանչյուր դեպքում շահագրգության համար կամ պակաս ցույց տալու իրական և ոչ իրական դեպքեր բացահայտելու և դրա արդյունքում միջամտող վարչական ակտ ընդունելու հարցում, այսինքն՝ վերջիններս շահագրգություն ունեն վարույթի ելքով, քանի որ դրա հետևանքով պետական բյուջե գանձվող լրացուցիչ գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին ստանում են դրամական պարզեցումություն: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական վարույթի

մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե առկա են հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով տրված պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգության լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաշառության նկատմամբ: Փաստորեն, հարկային օրենսդրության խախտումներ անմիջապես հայտնարերողներին օժտելով վարչական վարույթը եզրափակելու և վարչական ակտ ընդունելու իրավասությամբ, օրենքը հնարավորություն է տալիս ցանկացած դեպքում բացարկ հայտնել ստուգումն իրականացնող ցանկացած պաշտոնատար անձի, քանի որ, ինչպես նշվեց վերևում, օրենսդրության խախտումներ անմիջապես հայտնարերողներն ուղղակիորեն շահագրգության լինելու վարչական վարույթի ելքով:

Սեր խորին համոզմամբ, վերոհիշյալ հիմնախնդիրների ամենաճիշտ և արդյունավետ լուծումը հետևյալն է. անմիջապես ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք չափությունը է օժտված լինեն վարչական վարույթը եզրափակելու և վարչական ակտ ընդունելու իրավասությամբ: Վերջիններս պետք է օժտված լինեն միայն խախտումը արձանագրելու իրավասությամբ, և հայտնարերված խախտման վերաբերյալ նրանց կողմից արձանագրության կազմմամբ էլ վարչական վարույթը կիամարվի հարուցված: Դրանից հետո վարչական վարույթի մյուս երկու փուլերը՝ ընթացիկ և եզրափակիչ, պետք է իրականացվեն համապատասխան վարչական մարմնի այլ պաշտոնատար անձանց կամ կոլեգիալ մարմնի կողմից, որը, քննելով գործը, կընդունի վերջնական որոշում: Այդ դեպքում արդեն կլինի հըստակ տարանջատում վարչական վարույթի բոլոր փուլերի միջև, վարչական վարույթի մասնակիցներին հնարավորություն կընձեռնվի

լրիվ ծավալով իրականացնել օրենքով իրենց կան ու հիմնավորված վարչական ակտի ընթափահված իրավունքները, ինչն էլ, իր հերթին, մեծապես կնպաստի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկմանը և օրինա-

կան ու հիմնավորված վարչական ակտի ընդունմանը:

Օգտագործված գրականություն և իրավական ակտեր

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հունվար - դեկտեմբեր 2007, Հատոր 2, «Շիրակա Դուռ» ՍՊԸ, Երևան 2008:

Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, Հարդ ընդ Սովոր հրատարակչություն, Երևան, 2007:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004/18 (317), 31.03.04թ.:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2000/14 (112), 23.06.00թ.:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2002/33 (208), 14.08.02թ.:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2005/28(400), 18.05.05թ.:

¹ Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, Հարդ ընդ Սովոր հրատարակչություն, Երևան, 2007, էջ 7:

² Տե՛ս «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, ՀՀՊՏ 2005/28(400), 18.05.05:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2007/37 (561), 25.07.07.:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007թ. թիվ 3-1739 (ՏԴ) քաղ. գործով կայացված որոշումը՝ ըստ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ դիմումի ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության՝ Ծառայության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ 1018973 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՀՀՊՏ 2007/66.1, 26.12.07.:

МИКАЕЛ МИНАСЯН

Аспирант юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



СУДЕБНАЯ ВЛАСТЬ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ: СУД ЕС И НАЦИОНАЛЬНЫЕ СУДЫ

Основополагающее место в эволюции Европейских Сообществ - уникальных по своей природе и структуре межгосударственных образований, фундамент которых был заложен еще в пятидесятых годах двадцатого века вместе с учреждением трех европейских сообществ, каковыми являлись Европейское Объединение Угля и Стали (1951 г.), Европейское Экономическое Сообщество и Европейское Сообщество по Атомной Энергии (1957 г.), занимает создание общей правовой системы, представляющей собой необычную трансформацию международных договоров о свободной торговле в систему наднационального конституционного управления, в рамках которой государства-члены уступили значительную часть своего суверенитета.

Как показывает исторический опыт, общий рынок или пространство свободной торговли не могут действовать беспрепятственно, без наличия общепринятых правил и процедур, без основополагающих правовых институтов и убеждений. Правовое объединение всегда выступало и в качестве стимула, и в качестве результата политического объединения, и, будучи культурным феноменом, служит для усиления чувства национального или наднационального тождества.

Одним из основных факторов правовой интеграции Европейского Союза, как процесса установления наднациональной правовой системы в государствах-членах ЕС, является взаимодействие Суда ЕС с национальными судами государств-членов Европейского Союза. Принимая во внимание особенности госу-

дарств-членов, каждое из которых является носителем собственного как правового, так и исторического и культурного наследия, названное взаимодействие имеет фундаментальное значение для процесса гармонизации правовых систем.

Как известно, право Европейского Союза представляет собой совокупность правовых норм, регулирующих взаимоотношения, складывающиеся в процессе европейской интеграции, и создаваемых посредством их закрепления в определенных источниках. Источники права ЕС – это внешние формы выражения его правовых норм, которые образуют взаимосвязанную систему, построенную на иерархических принципах¹. При рассмотрении источников права ЕС их можно подразделить на:

- 1) источники первичного права - учредительные договоры, то есть Договор о Европейском Сообществе, Договор Еврата, части Договора о Европейском Союзе, все договоры, которыми были внесены изменения и/или дополнения, а также основные принципы права ЕС, которые также можно отнести к первичному праву ЕС;

- 2) источники вторичного права, которое представляет собой совокупность нормативно-правовых актов, принимаемых институтами ЕС на основании первичного права, то есть законодательство ЕС в форме регламентов, решений и директив;

